

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի 2015/1095 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**«Մասնագիտացված սառնարանային պահարանների, արագ սառեցման պահարանների, կոնդենսացնող սարքերի եւ տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին»  
Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող  
(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,  
հաշվի առնելով «Էներգասպառող արտադրանքի էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ սահմանելու շրջանակ սահմանելու մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի 2009/125/ԵՀ հրահանգը<sup>1</sup> եւ մասնավորապես՝ դրա 15(1) հոդվածը,

2009/125/ԵՀ հրահանգի 18-րդ հոդվածում նշված խորհրդատվական ֆորումում քննարկումներից հետո,

քանի որ՝

- 1) 2009/125/ԵՀ հրահանգի համաձայն՝ էկոնախագծմանը ներկայացվող պահանջները պետք է սահմանվեն Հանձնաժողովի կողմից էներգասպառող այն արտադրատեսակների համար, որոնք ունեն իրացման եւ ապրանքաշրջանառության մեծ ծավալներ, նշանակալից ազդեցություն են գործում շրջակա միջավայրի վրա եւ ունեն նախագծման միջոցով շրջակա միջավայրի վրա ավելի քիչ ազդեցություն ունենալու մեծ ներուժ՝ չպահանջելով չափազանց մեծ ծախսեր.

---

<sup>1</sup> ՊՏ L 285, 30.12. 1989թ., էջ 10:

- 2) 2009/125/ԵՀ հրահանգի համաձայն<sup>2</sup> Հանձնաժողովը 2008 թվականի հոկտեմբերի 21-ին սահմանել է առաջին Աշխատանքային պլանը, որը ներառում է 2009-2011 թվականները, եւ որում նշվում են սառնարանային եւ սառցարանային սարքավորումները, այդ թվում՝ մասնագիտացված սառնարանային պահարանները, արագ սառեցման պահարանները, կոնդենսացնող սարքերը եւ տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումները՝ որպես կիրարկման միջոցների ընդունման համար առաջնահերթություն.
- 3) Հանձնաժողովն իրականացրել է Միությունում սովորաբար օգտագործվող սառնարանային ու սառցարանային սարքավորումների, այդ թվում՝ մասնագիտացված սառնարանային պահարանների, արագ սառեցման պահարանների, կոնդենսացնող սարքերի եւ տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների տեխնիկական, բնապահպանական եւ տնտեսական ասպեկտների վերաբերյալ նախապատրաստական ուսումնասիրություն: Ուսումնասիրությունը մշակվել է Միության եւ երրորդ երկրների շահառուների ու շահագրգիռ կողմերի հետ համատեղ, իսկ արդյունքները հասանելի են դարձել հանրության համար.
- 4) սառնարանային ու սառցարանային սարքավորումների լրակազմի հինգերորդ ապրանքը՝ մուտքի հնարավորությամբ սառցասենյակները, խմբի շրջանակներում իրենց բացառիկ բնութագրերի պատճառով դիտարկվում են առանձին, եւ այս անգամ սույն կանոնակարգով չպետք է անդրադարձ կատարվի դրանց.
- 5) ինչ վերաբերում է մասնագիտացված սառնարանային պահարաններին, ապա հարկավոր չէ ջերմոցային գազերի ուղղակի արտանետումներին ներկայացվող էկոնախագծման մասով սահմանել սառնազդակների օգտագործմանն առնչվող պահանջներ, քանի որ կենցաղում ցածր գլոբալ տաքացման ներուժ (ԳՏՆ) ունեցող սառնազդակների օգտագործման աճող

---

<sup>2</sup> COM(2008) 660 վերջնական:

մակարդակը եւ սառնարանների կոմերցիոն շուկան ստեղծում են այնպիսի նախադեպ, որին կարող է հետամուտ լինել մասնագիտացված սառնարանային պահարաններին առնչվող ոլորտը.

- 6) ինչ վերաբերում է տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումներին, ապա նպատակահարմար է ջերմոցային գազերի ուղղակի արտանետումներին ներկայացվող էկոնախազման մասով սահմանել սառնազդակների օգտագործմանն առնչվող պահանջներ, քանի որ դրա արդյունքում շուկան հետագայում կուղղորդվի դեպի ցածր գլոբալ տաքացման ներուժ (ԳՏՆ) ունեցող սառնազդակները, որոնք միեւնույն ժամանակ հաճախ առավել էներգաարդյունավետ են.
- 7) կոնդենսացնող սարքերի մասով գոյություն ունեն չարտոնագրված տեխնոլոգիաներ, որոնք սառնազդակների օգտագործման միջոցով նվազեցնում են ջերմոցային գազերի ուղղակի արտանետումները՝ սառնազդակների օգտագործման մասով՝ շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության նվազեցմամբ: Այնուհանդերձ, այս տեխնոլոգիաների ծախսարդյունավետությունը եւ դրանց էներգաարդյունավետության վրա ազդեցությունը կոնդենսացնող սարքերի մասով կիրառելու դեպքում դեռեւս լիովին սահմանված չեն, քանի որ կամ դրանք աննշան չափով են տարածված, կամ ներկայումս կոնդենսացնող սարքերի շուկայում միայն փոքր բաժին են կազմում.
- 8) քանի որ սառնազդակների մասին նշվում է թիվ 842/2006 (ԵՀ) կանոնակարգով<sup>1</sup>, եւ քանի որ 2012 թվականի նոյեմբերի 7-ին Հանձնաժողովն առաջարկել է վերանայել սույն կանոնակարգը, ապա սառնազդակների օգտագործման նկատմամբ հատուկ սահմանափակումներ սույն կանոնակարգով չպետք է սահմանվեն: Այնուհանդերձ, կոնդենսացնող սարքերի եւ տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների համար

---

<sup>1</sup> Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի մայիսի 17-ի «Կոնկրետ ֆտորացված ջերմոցային գազերի մասին» թիվ 842/2006 կանոնակարգ (ԵՀ) (ՊՏ թիվ L 161, 14.06.2000թ., էջ 1):

Էկոնախագծման պահանջներով պետք է առաջարկվեն լրացուցիչ առավելություններ՝ նպատակ ունենալով սառնազդակների օգտագործման հիման վրա շուկան ուղղորդել դեպի տեխնոլոգիաների զարգացում՝ շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության նվազեցմամբ, քանի որ լրացուցիչ առավելությունների արդյունքում կնվազեն ցածր ԳՏՆ ունեցող սառնազդակների հետ օգտագործման համար նախատեսված կոնդենսացնող սարքերին եւ տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումներին ներկայացվող՝ նվազագույն էներգաարդյունավետության պահանջները: Հետագայում իրականացվելիք ուսումնասիրության շրջանակներում կդիտարկվի բարձր ԳՏՆ ունեցող սառնազդակներ օգտագործող արտադրանքի մշակումը՝ գործող համապատասխան օրենսդրության համաձայն.

- 9) սույն կանոնակարգի նպատակներով էներգիայի սպառումը դրա օգտագործման փուլում սահմանվել է որպես մասնագիտացված սառնարանային պահարանների, արագ սառեցման պահարանների, կոնդենսացնող սարքերի եւ տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների մասով բնապահպանական էական հարցադրում.
- 10) նախապատրաստական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 2009/125/ԵՀ հրահանգի I հավելվածի 1-ին մասում նշված՝ էկոնախագծման այլ պարամետրերի ներկայացվող պահանջները կիրառելի չեն մասնագիտացված սառնարանային պահարանների, արագ սառեցման պահարանների, կոնդենսացնող սարքերի եւ տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների դեպքում.
- 11) Միությունում կոնդենսացնող սարքերի, տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների եւ մասնագիտացված սառնարանային պահարանների մասով էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը 2012 թվականին գնահատվել է 116,5 ՏՎտ/ժ (տերավատտ/ժամ), ինչը համարժեք է 47 մետրական տոննա ածխաթթու գազի (CO<sub>2</sub>՝ ածխածնի երկօքսիդի)

արտանետումներին: Եթե կոնկրետ միջոցներ չձեռնարկվեն, ապա կանխատեսվում է, որ տարեկան էներգասպառումը 2020 թվականին կկազմի 134,5 ՏՎտ/ժ, իսկ 2030 թվականին՝ 154,5 ՏՎտ/ժ, ինչը համարժեք է համապատասխանաբար 54,5 եւ 62,5 մետրական տոննա ածխաթթու գազի արտանետումներին: Ակնկալվում է, որ սույն կանոնակարգի եւ Հանձնաժողովի թիվ 2015/1094 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի<sup>2</sup> համակցված ազդեցության արդյունքում մինչեւ 2020 թվականը տարեկան կխնայվի 6,3 ՏՎտ/ժ էլեկտրաէներգիա, իսկ մինչեւ 2030 թվականը՝ 15,6 ՏՎտ/ժ, եթե համեմատություն անցկացվի այն իրավիճակի հետ, թե ինչ կլինի, եթե ոչ մի միջոց չձեռնարկվի:

- 12) նախապատրաստական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ էներգիայի օգտագործման փուլում դրա սպառումը կարելի է զգալիորեն նվազեցնել ծախսարդյունավետ չարտոնագրված տեխնոլոգիաների օգտագործման միջոցով, որոնք նվազեցնում են այդ արտադրանքի գնման եւ շահագործման համակցված ծախսերը:
- 13) էկոնախագծման պահանջներով պետք է ներդաշնակեցվեն Միության տարածքում մասնագիտացված սառնարանային պահարաններին, արագ սառեցման պահարաններին, կոնդենսացնող սարքերին եւ տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումներին ներկայացվող էներգասպառման պահանջները, ինչի շնորհիվ միասնական շուկան կդառնա առավել արդյունավետ, եւ կբարելավվեն այդ արտադրանքի էկոլոգիական ցուցանիշները:
- 14) էկոնախագծման պահանջները չպետք է ազդեցություն ունենան մասնագիտացված սառնարանային պահարանների, արագ սառեցման

---

<sup>2</sup> «Մասնագիտացված սառնարանային պահարանների էներգապիտակավորման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 5-ի թիվ 2015/1094 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգ (տե՛ս սույն պաշտոնական տեղեկագրի 2-րդ էջը)

պահարանների, կոնդենսացնող սարքերի եւ տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների ֆունկցիոնալության կամ մատչելիության վրա՝ վերջնական սպառողի տեսանկյունից, ինչպես նաեւ չպետք է բացասական ազդեցություն ունենան առողջության, անվտանգության կամ շրջակա միջավայրի վրա.

- 15) Էկոնախագծման պահանջները պետք է ներդրվեն աստիճանաբար՝ ժամանակ տալով արտադրողներին իրենց արտադրանքը սույն կանոնակարգին համապատասխան վերանախագծելու համար: Ժամկետը պետք է սահմանվի այնպես, որ հաշվի առնվեն արտադրողների կատարած ծախսերի մասով հնարավոր հետեւանքները՝ միեւնույն ժամանակ ապահովելով սույն կանոնակարգի նպատակների ժամանակին ապահովումը.
- 16) արտադրանքի պարամետրերը պետք է չափվեն եւ հաշվարկվեն՝ հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի այնպիսի մեթոդների կիրառմամբ, որոնց դեպքում հաշվի են առնվում չափման եւ հաշվարկման՝ համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդները: Հնարավորության դեպքում դրանք ներառում են Հանձնաժողովից ստացված հարցման հիման վրա Եվրոպական ստանդարտացման մարմինների կողմից ընդունված՝ ներդաշնակեցված ստանդարտներ՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 98/34/ԵՀ հրահանգում<sup>3</sup> սահմանված ընթացակարգերի համաձայն.
- 17) Սառեցման աշխատանքային ջերմաստիճանի սահմանումը կիրառվում է մասնագիտացված սառնարանային պահարանների համար տարեկան էներգասպառման արժեքները սահմանելիս. միեւնույն ժամանակ հաշվի է

---

<sup>3</sup> Տեղեկատվական հասարակության ծառայությունների տեխնիկական ստանդարտների, կարգավորումների և կանոնների ոլորտում տեղեկությունների տրամադրման ընթացակարգը սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի հունիսի 22-ի թիվ 98/34/ԵՀ հրահանգ (ՊՏ L 204, 21.07. 1998թ., էջ 37):

առնվում սննդամթերքի անվտանգությունը, որը որեւէ առնչություն չունի սննդամթերքի անվտանգության օրենսդրության հետ.

- 18) 2009/125/ԵՀ հրահանգի 8(2) հոդվածի համաձայն՝ սույն կանոնակարգով սահմանվում են, թե համապատասխանության գնահատման որ ընթացակարգերն են կիրառելի:
- 19) համապատասխանության ստուգման գործընթացը խթանելու նպատակով արտադրողները պետք է 2009/125/ԵՀ հրահանգի IV եւ V հավելվածներում նշված տեխնիկական փաստաթղթերում տեղեկություններ տրամադրեն այն մասով, որով այդ տեղեկություններն առնչվում են սույն կանոնակարգով սահմանված պահանջներին.
- 20) մասնագիտացված սառնարանային պահարանների, արագ սառեցման պահարանների, կոնդենսացնող սարքերի եւ տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների օգտագործման հետեւանքով առաջացած ազդեցությունը շրջակա միջավայրի վրա հետազայում սահմանափակելու նպատակով արտադրողները պետք է տրամադրեն դրանց կազմատման, վերաշրջանառության կամ օգտահանման վերաբերյալ տեղեկություններ.
- 21) ի լրումն սույն կանոնակարգում սահմանված իրավապարտադիր պահանջների՝ գոյություն ունեցող լավագույն տեխնոլոգիաների համար պետք է առանձնացվեն կողմնորոշիչ հենանիշեր՝ ապահովելով մասնագիտացված սառնարանային պահարանների, կոնդենսացնող սարքերի եւ տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների շահագործման ժամկետի ընթացքում դրանց էկոլոգիական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հեշտ հասանելիությունը եւ մատչելիությունը.
- 22) Սույն կանոնակարգով նախատեսված միջոցները համապատասխանում են 2009/125/ԵՀ հրահանգի 19(1) հոդվածով ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

### *Հոդված 1*

#### **Առարկան եւ գործողության ոլորտը**

1. Սույն կանոնակարգով սահմանվում են մասնագիտացված սառնարանային պահարանների եւ արագ սառեցման պահարանների շուկայահանմանը ներկայացվող էկոնախագծման պահանջները:

Սույն կանոնակարգը կիրառվում է էլեկտրական ցանցից աշխատող արագ սառեցման պահարանների եւ էլեկտրական ցանցից աշխատող մասնագիտացված սառնարանային պահարանների, այդ թվում՝ սննդամթերքի եւ կենդանական կերերի սառեցման համար վաճառվող սարքերի մասով:

Այնուհանդերձ, այն չի կիրառվում հետեւյալ արտադրանքի համար՝

- ա) մասնագիտացված սառնարանային պահարաններ, որոնց առաջնային սնուցումն իրականացվում է էլեկտրաէներգիայից տարբերվող էներգայի աղբյուրներից.
- բ) մասնագիտացված սառնարանային պահարաններ, որոնք աշխատում են հեռահար կոնդենսացնող սարքի հետ.
- գ) բաց պահարաններ, որոնց դեպքում բաց լինելը դրանց հիմնական ֆունկցիոնալությանը ներկայացվող էական պահանջ է.
- դ) մթերքի մշակման համար հատուկ նախագծված պահարաններ, որոնց դեպքում ուղղակի մեկ խցիկի առկայությունը, որի զուտ ծավալը համարժեք է պահարանի ընդհանուր զուտ ծավալի 20 %-ից պակաս թվի, եւ որը հատուկ նախագծված է մթերքի մշակման համար, բավարար չէ բացառման համար.
- ե) սառեցված սննդամթերքը տրված եղանակով միայն հալեցնելու համար հատուկ նախագծված պահարաններ, որոնց դեպքում ուղղակի մեկ



խցիկի առկայությունը, որը հատուկ նախագծված է սառեցված սննդամթերքը տրված եղանակով հալեցնելու համար, բավարար չէ բացառման համար.

- զ) աղցանների համար ցուցապահարաններ.
- է) սառնարանային ցուցասեղաններ եւ նմանատիպ այլ պահարաններ, որոնք, սառեցումից եւ պահպանումից բացի, ի սկզբանե նախատեսված են սննդամթերքի ցուցադրման եւ վաճառքի համար.
- ը) պահարաններ, որոնց համար գոլորշու սեղմման եւ սառեցման շրջափուլ չի կիրառվում.
- թ) արագ սառեցման պահարաններ եւ արագ սառեցման խցիկներ՝ մինչեւ 300 կգ սննդամթերքի առավելագույն տարողունակությամբ.
- ժ) հոսքային տեխնոլոգիական պրոցես ապահովող արագ սառեցման սարքավորումներ.
- ժա) պատվերով պատրաստված մասնագիտացված սառնարանային պահարաններ եւ արագ սառեցման պահարաններ, որոնք պատրաստված են մեկանգամյա օգտագործման սկզբունքով՝ անհատական հաճախորդի մասնագրով, եւ համանման չեն մասնագիտացված սառնարանային այլ պահարանների, որոնք նկարագրված են I հավելվածի 10-րդ սահմանման մեջ կամ արագ սառեցման այլ պահարանների, որոնք նկարագրված են I հավելվածի 11-րդ սահմանման մեջ.
- ժբ) ներկառուցված պահարաններ.
- ժգ) կոնտեյներային սառնարանային դարակաշարեր եւ միջանցիկ պահարաններ.
- ժդ) ստատիկ օդի պահարաններ.
- ժե) սառցարան-կրպակներ:

2. Սույն կանոնակարգով սահմանվում են նաեւ ցածր կամ միջին ջերմաստիճաններով կամ երկու ջերմաստիճաններով միասին աշխատող կոնդենսացնող սարքերի շուկայահանմանը ներկայացվող էկոնախագծման պահանջները:

Այնուհանդերձ, այն չի կիրառվում հետեւյալ արտադրանքի համար՝

- ա) կոնդենսացնող սարքեր՝ գոլորշիչի ներառմամբ, որը կարող է լինել ամբողջական գոլորշիչ, ինչպիսիք են միաբլոկ տարրերը, կամ հեռահար գոլորշիչ, ինչպիսին հանդիպում է տարանջատ միավորներում.
- բ) կոմպրեսորային հանգույցներ կամ ազրեգատներ, որոնք չեն ներառում կոնդենսատոր.
- գ) կոնդենսացնող սարքեր, որոնց կոնդենսատորի մասը չի օգտագործում օդը որպես ջերմության փոխանցման միջավայր:

3. Սույն կանոնակարգով նաեւ սահմանվում են ցածր կամ միջին ջերմաստիճանում աշխատելու համար նախատեսված տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների շուկայահանմանը ներկայացվող էկոնախագծման պահանջները:

Այնուհանդերձ, այն չի կիրառվում հետեւյալ արտադրանքի համար՝

- ա) բարձր ջերմաստիճանում աշխատելու համար նախատեսված տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումներ.
- բ) բացառապես գոլորշիչ կոնդենսատորի օգտագործմամբ աշխատող տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումներ.
- գ) պատվերով պատրաստված տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումներ, որոնք մոնտաժվում են տեղում, պատրաստված են մեկանգամյա օգտագործման սկզբունքով.
- դ) կլանման պաղեցնող սարքավորումներ:

## Հոդված 2

### Սահմանումներ

1. Կիրառվում են հետևյալ սահմանումները.

- ա) «մասնագիտացված սառնարանային պահարան» նշանակում է մեկուսացված սառեցնող սարք, որը բաղկացած է մեկ կամ մի քանի դռնով կամ դարակներով մուտքի հնարավորություն ապահովող մեկ կամ մի քանի խցիկներից, կարող է սահմանված ժամկետների ընթացքում շարունակաբար պահպանել սննդամթերքի ջերմաստիճանը՝ պաղեցման կամ սառեցման աշխատանքային ջերմաստիճանում՝ օգտագործելով գոլորշու խտացման շրջափուլ, եւ նախատեսված է սննդամթերքը ոչ կենցաղային միջավայրերում պահպանելու, այլ ոչ թե սպառողին ցուցադրելու կամ նրան հասանելի դարձնելու համար.
- բ) «արագ սառեցման պահարան» նշանակում է մեկուսացված սառեցնող սարք, որն ի սկզբանե նախատեսված է տաք սննդամթերքը կտրուկ հովացնելու համար. պաղեցնելու դեպքում՝ 10 °C-ից ցածր ջերմաստիճան, իսկ սառեցնելու դեպքում՝ - 18 °C-ից ցածր ջերմաստիճան.
- գ) «արագ սառեցման խցիկ» նշանակում է փակ տարածք, որի դռնատեղը եւ ներքին տարածությունը բավականաչափ ընդարձակ են մարդու մուտքն ապահովելու համար, որն ի սկզբանե նախատեսված է տաք սննդամթերքը կտրուկ հովացնելու համար. պաղեցնելու դեպքում՝ 10 °C-ից ցածր ջերմաստիճան, իսկ սառեցնելու դեպքում՝ - 18 °C-ից ցածր ջերմաստիճան.
- դ) «տարողություն» նշանակում է արագ սառեցման պահարանների համար սննդի այն զանգվածը, որը կարող է (արագ սառեցման պահարանի միջոցով) մշակվել. պաղեցնելու դեպքում՝ 10 °C-ից ցածր ջերմաստիճան, իսկ սառեցնելու դեպքում՝ - 18 °C-ից ցածր ջերմաստիճան՝ մեկ գործողության ժամանակ.

- ե) «հոսքային պրոցեսով աշխատող արագ սառեցման սարքավորում» նշանակում է կոնվեյերային ժապավենով ապահովված արագ սառեցման պահարան՝ սննդամթերքը մատակարարելու, սննդամթերքի արագ սառեցման կամ պաղեցման հոսքային պրոցեսն ապահովելու համար.
- զ) «սննդամթերք» նշանակում է սնունդ, բաղադրատարրեր, խմիչքներ, այդ թվում՝ գինի եւ ի սկզբանե սպառման համար նախատեսված այլ մթերք, որն անհրաժեշտ է սառեցնել սահմանված ջերմաստիճանում.
- է) «ներկառուցված պահարան» նշանակում է ֆիքսված մեկուսացված սառեցնող սարք, որը նախատեսված է պահարանում, պատի մեջ նախապատրաստված փորակում կամ նմանատիպ վայրում տեղադրելու համար, եւ որը պետք է վերջնական կահավորվի.
- ը) «կոնտեյներային սառնարանային դարակաշար» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան, որն ունի մեկ եզակի խցիկ, որը թույլ է տալիս ներհրել արտադրանքի անվավոր ազրեգատները.
- թ) «միջանցիկ պահարան» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան, որը մուտքի հասանելիություն ունի երկու կողմերից.
- ժ) «ստատիկ օդի պահարան» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան, որը չունի օդի ներքին հարկադիր շրջանառություն, հատուկ նախագծված է ջերմաստիճանի նկատմամբ զգայուն սննդամթերքը պահպանելու համար կամ առանց հերմետիկ փաթեթվածքի պահվող սննդամթերքի վրա չորացնող ազդեցությունից խուսափելու համար այն դեպքում, երբ պահարանի ներսում գտնվող ստատիկ օդի միակ խցիկը բավարար չէ պահարանը որպես ստատիկ օդի պահարան նախատեսելու համար.

- ժա) «գերիզոր պահարան» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան, որը պաղեցման կամ սառեցման աշխատանքային ջերմաստիճան կարող է շարունակաբար պահպանել իր բոլոր խցիկներում (խցիկում), կլիմայական 5-րդ դասին համապատասխանող միջավայրի պայմաններում, ինչպես նշված է IV հավելվածի 3-րդ աղյուսակում.
- ժբ) «բաց պահարան» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան, որի սառնարանային հատվածը հասանելի է դրսից՝ առանց դուռը կամ դարակը բացելու, որում առանց դուռը կամ դարակը բացելու՝ դրսից հասանելի մեկ խցիկի ուղղակի առկայությունը, որի զուտ ծավալը համարժեք է մասնագիտացված սառնարանային պահարանի ընդհանուր զուտ ծավալի 20 %-ից պակաս թվի, բավարար չէ բաց պահարանը որպես այդպիսին որակելու համար.
- ժգ) «աղցանների համար ցուցապահարան» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան՝ մեկ կամ մի քանի դիմային դռնով կամ դարակով՝ ուղղահայաց հարթությամբ, որի վերին մակերեսային առկա են փորվածքներ, որոնցում կարող են տեղադրվել ժամանակավոր պահպանման զետեղարաններ այնպիսի սննդամթերքի հնարավոր պահպանումն ապահովելու համար, ինչպիսիք են (որոնցով, սակայն, չեն սահմանափակվում) պիցցայի տոպպինգները կամ աղցանի պարագաները.
- ժդ) «սառցարան-կրպակ» նշանակում է մթերքի սառնարան, որտեղ խցիկը (խցիկները) հասանելի է (են) սարքի վերին հատվածից, կամ որն ունի թե՛ վերեւից բացվող տիպի եւ թե՛ ուղղահայաց տիպի խցիկներ, սակայն որի վերեւից բացվող տիպի խցիկի (խցիկների) համախառն ծավալը գերազանցում է սարքի ընդհանուր համախառն ծավալի 75 %-ը.
- ժե) «կոնդենսացնող սարք» նշանակում է էլեկտրական շարժաբերով առնվազն մեկ կոմպրեսորից եւ մեկ կոնդենսատորից բաղկացած

արտադրանք, որը կարող է հովացնել սառնարանային սարքը կամ համակարգը եւ դրա ներսում շարունակաբար ցածր կամ միջին ջերմաստիճան պահպանել՝ գոլորշիչին եւ դրոսելային սարքին միացված լինելու դեպքում օգտագործելով գոլորշու խտացման շրջափուլ.

ժգ) «ցածր ջերմաստիճան» նշանակում է, որ կոնդենսացնող սարքն իր հովացման դրվածքային հզորությունը կարող է ապահովել  $-35\text{ }^{\circ}\text{C}$  հազեցած գոլորշիացման ջերմաստիճանում.

ժէ) «միջին ջերմաստիճան» նշանակում է, որ կոնդենսացնող սարքն իր հովացման դրվածքային հզորությունը կարող է ապահովել  $-10\text{ }^{\circ}\text{C}$  հազեցած գոլորշիացման ջերմաստիճանում.

ժը) «հովացման դրվածքային հզորություն» նշանակում է հովացման այն հզորությունը, որին գոլորշու խտացման շրջափուլը հասնում է կոնդենսացնող սարքի միջոցով՝ գոլորշիչին եւ դրոսելային սարքին միացված լինելու, լրիվ բեռնվածքով աշխատելու դեպքում, ինչպես նաեւ փորձարկման ստանդարտ պայմաններում, միջավայրի հաշվարկային  $32\text{ }^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում չափվելու դեպքում՝ արտահայտված կՎտ-ով.

ժթ) «տեխնոլոգիական պաղեցման սարքավորում» նշանակում է առնվազն մեկ կոմպրեսորից եւ մեկ գոլորշիչից բաղկացած արտադրանք, որը կարող է հովացնել սառնարանային սարքը կամ համակարգը եւ շարունակաբար պահպանել հեղուկի ջերմաստիճանը՝ սառնարանային սարքին կամ համակարգին հովացում մատակարարելու համար. այն կարող է բաղկացած լինել կամ չլինել կոնդենսատորից, սառիչի միացման եւ օժանդակ այլ սարքավորումներից.

ի) «ցածր ջերմաստիճան» նշանակում է, որ տեխնոլոգիական պաղեցման սարքավորումն իր հովացման դրվածքային հզորությունը կարող է ապահովել խցիկային ջերմափոխանակչի  $-25\text{ }^{\circ}\text{C}$  ելքային ջերմաստիճանի դեպքում՝ փորձարկման ստանդարտ պայմաններում.

- իա) «միջին ջերմաստիճան» նշանակում է, որ տեխնոլոգիական պաղեցման սարքավորումն իր հովացման դրվածքային հզորությունը կարող է ապահովել խցիկային ջերմափոխանակչի  $-8\text{ }^{\circ}\text{C}$  ելքային ջերմաստիճանի դեպքում՝ փորձարկման ստանդարտ պայմաններում.
- իբ) «բարձր ջերմաստիճան» նշանակում է, որ տեխնոլոգիական պաղեցման սարքավորումն իր հովացման դրվածքային հզորությունը կարող է ապահովել խցիկային ջերմափոխանակչի  $7\text{ }^{\circ}\text{C}$  ելքային ջերմաստիճանի դեպքում՝ փորձարկման ստանդարտ պայմաններում.
- իգ) «հովացման դրվածքային հզորություն» նշանակում է կՎտ-ով արտահայտված այն հովացման հզորությունը, որը տեխնոլոգիական պաղեցման սարքավորումը կարող է ապահովել լրիվ բեռնվածքով աշխատելու դեպքում, ինչպես նաև փորձարկման ստանդարտ պայմաններում չափվելու դեպքում՝ միջավայրի հաշվարկային  $35\text{ }^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում՝ օդով պաղեցման սարքավորումների համար, եւ կոնդենսատորի  $30\text{ }^{\circ}\text{C}$  ջրի մուտքային ջերմաստիճանում՝ ջրով պաղեցման սարքավորումների համար.
- իդ) «կոմպրեսորային հանգույց» կամ «կոմպրեսորային ագրեգատ» նշանակում է էլեկտրական շարժաբերով առնվազն մեկ կամ մի քանի սառեցման կոմպրեսոր(ներ)ից եւ հսկիչ համակարգից բաղկացած արտադրանք.
- իե) «կլանման պաղեցնող սարքավորում» նշանակում է տեխնոլոգիական պաղեցման սարքավորում, որի դեպքում սառեցումն իրականացվում է կլանման պրոցեսի միջոցով՝ ջերմությունը որպես էներգիայի աղբյուր օգտագործելով.
- իզ) «գոլորշի կոնդենսացնող պաղեցման սարքավորում» նշանակում է տեխնոլոգիական պաղեցման սարքավորում՝ հագեցած գոլորշի կոնդենսատորով, որտեղ սառնազդակը հովացվում է օդի շարժը եւ ջրացողումը համակցելու միջոցով:

### Հոդված 3

#### **Էկոնախագծման պահանջները եւ ժամանակացույցը**

1. Մասնագիտացված սառնարանային պահարաններին եւ արագ սառեցման պահարաններին ներկայացվող էկոնախագծման պահանջները սահմանված են II հավելվածում:
2. Կոնդենսացնող սարքերին ներկայացվող էկոնախագծման պահանջները սահմանված են V հավելվածում:
3. Տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումներին ներկայացվող էկոնախագծման պահանջները սահմանված են VII հավելվածում:
4. Էկոնախագծման պահանջները կիրառվում են հետեւյալ ժամանակացույցի համաձայն.

ա) 2016 թվականի հուլիսի 1-ից՝

- 1) կոնդենսացնող սարքերը պետք է համապատասխանեն V հավելվածի 1(ա) եւ 2-րդ կետերում սահմանված պահանջներին.
- 2) տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումները պետք է համապատասխանեն VII հավելվածի 1(ա) եւ 2-րդ կետերում սահմանված պահանջներին.
- 3) մասնագիտացված սառնարանային պահարանները պետք է համապատասխանեն II հավելվածի 1(ա)(i) եւ 2(ա) կետերում սահմանված պահանջներին.
- 4) գերհզոր պահարանները պետք է համապատասխանեն II հավելվածի 1(բ) եւ 2(ա) կետերում սահմանված պահանջներին.
- 5) արագ սառեցման պահարանները պետք է համապատասխանեն II հավելվածի 2(բ) կետում սահմանված պահանջներին.

բ) 2018 թվականի հունվարի 1-ից՝



- 1) մասնագիտացված սառնարանային պահարանները պետք է համապատասխանեն II հավելվածի 1(ա)(ii) կետում սահմանված պահանջներին.

գ) 2018 թվականի հուլիսի 1-ից՝

- 1) կոնդենսացնող սարքերը պետք է համապատասխանեն V հավելվածի 1(բ) կետում սահմանված պահանջներին.
- 2) տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումները պետք է համապատասխանեն VII հավելվածի 1(բ) կետում սահմանված պահանջներին.

դ) 2019 թվականի հուլիսի 1-ից՝

- 1) մասնագիտացված սառնարանային պահարանները պետք է համապատասխանեն II հավելվածի 1(ա)(iii) կետում սահմանված պահանջներին:

5. Մասնագիտացված սառնարանային պահարաններին ներկայացվող էկոնախագծման պահանջներին համապատասխանությունը չափվում է հաշվարկվում է III եւ IV հավելվածներում սահմանված մեթոդներին համապատասխան:

6. Կոնդենսացնող սարքերին ներկայացվող էկոնախագծման պահանջներին համապատասխանությունը չափվում է հաշվարկվում է VI հավելվածում սահմանված մեթոդներին համապատասխան:

7. Տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումներին ներկայացվող էկոնախագծման պահանջներին համապատասխանությունը չափվում է հաշվարկվում է VIII հավելվածում սահմանված մեթոդներին համապատասխան:

#### Հոդված 4

##### **Համապատասխանության գնահատումը**

1. 2009/125/ԵՀ հրահանգի 8(2) հոդվածում նշված համապատասխանության գնահատման ընթացակարգը տվյալ հրահանգի IV հավելվածով սահմանված նախագծման աշխատանքների ներքին հսկողության համակարգն է կամ տվյալ հրահանգի V հավելվածով սահմանված կառավարման համակարգը:
2. 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխանության գնահատման նպատակով տեխնիկական փաստաթղթերը պարունակում են սույն կանոնակարգի II հավելվածի 2-րդ կետում, V հավելվածի 2(բ) կետում եւ VII հավելվածի 2(բ) կետում սահմանված տեղեկությունները:

#### Հոդված 5

##### **Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը**

Անդամ պետությունների մարմինները կիրառում են IX հավելվածում, X հավելվածում եւ XI հավելվածում նշված ստուգման ընթացակարգը 2009/125/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված՝ շուկայի վերահսկողության գործողություններ իրականացնելիս՝ սույն կանոնակարգի II հավելվածում, V հավելվածում եւ VII հավելվածում նշված պահանջների հետ համապատասխանություն ապահովելու համար:

### Հոդված 6

#### **Կողմնորոշիչ հենանիշերը**

Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու ժամանակ շուկայում առկա օպտիմալ շահագործման բնութագրեր ունեցող մասնագիտացված սառնարանային պահարանների, կոնդենսացնող սարքերի եւ տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների մասով կողմնորոշիչ հենանիշերը սահմանված են XII հավելվածում:

### Հոդված 7

#### **Վերանայումը**

Հանձնաժողովը վերանայում է սույն կանոնակարգը տեխնոլոգիական առաջընթացի տեսանկյունից եւ այդ վերանայման արդյունքները խորհրդատվական ֆորում է ներկայացնում ոչ ուշ, քան սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո՝ հինգ տարվա ընթացքում: Վերանայումը ներառում է հետեւյալը՝

1. մասնագիտացված սառնարանային պահարանների համար՝ ներդրման նպատակահարմարության գնահատումը, մասնավորապես՝
  - ա) 1(1) հոդվածում նշված պահարաններին ներկայացվող էկոնախագծման պահանջներ.
  - բ) գերիզոր պահարաններին ներկայացվող ավելի խիստ պահանջներ.
  - գ) սննդամթերքը հովացնելու նպատակով մասնագիտացված սառնարանային պահարանի տարողությանը ներկայացվող տեղեկատվական պահանջներ.
  - դ) սառնարան-սառցարանների ստանդարտ տարեկան էներգասպառումը որոշող մեթոդ.

- ե) կանգնակ-պահարանների ստանդարտ տարեկան էներգասպառումը որոշող փոփոխված մեթոդ.
2. արագ սառեցման պահարանների համար՝ տվյալ արտադրանքին ներկայացվող էկոնախագծման պահանջների ներդրման նպատակահարմարության գնահատումը.
3. մուտքի հնարավորությամբ սառցասենյակների համար՝ տվյալ արտադրանքին ներկայացվող էկոնախագծման պահանջների ներդրման նպատակահարմարության գնահատումը.
4. կոնդենսացնող սարքերի եւ տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների համար՝
- ա) էկոնախագծման այնպիսի պահանջներ սահմանելու նպատակահարմարության գնահատումը, որոնք ներկայացվում են սառնազդակների մասով ջերմոցային գազերի ուղղակի արտանետումներին,
- բ) էկոնախագծման այնպիսի պահանջներ սահմանելու նպատակահարմարության գնահատումը, որոնք ներկայացվում են ցածր ջերմաստիճանի դեպքում 0,1 կՎտ-ից ցածր, իսկ միջին ջերմաստիճանի դեպքում 0,2 կՎտ-ից ցածր հովացման դրվածքային հզորություն ունեցող կոնդենսացնող սարքերին, ինչպես նաեւ ցածր ջերմաստիճանի դեպքում 20 կՎտ-ից բարձր, իսկ միջին ջերմաստիճանի դեպքում 50 կՎտ-ից բարձր հովացման դրվածքային հզորություն ունեցող կոնդենսացնող սարքերին.
- գ) էկոնախագծման այնպիսի պահանջներ սահմանելու նպատակահարմարության գնահատումը, որոնք ներկայացվում են գոլորշիչի, կոմպրեսորային հանգույցների եւ ագրեգատների հետ միասին վաճառվող կոնդենսացնող սարքերին, որոնց մեջ կոնդենսատոր ներառված չէ, եւ այն կոնդենսացնող սարքերին, որոնց դեպքում օդը չի օգտագործվում որպես կոնդենսատորի համար ջերմության փոխանցման միջավայր.

- դ) էկոնախագծման այնպիսի պահանջներ սահմանելու նպատակահարմարության գնահատումը, որոնք ներկայացվում են գոլորշիչ կոնդենսատորի օգտագործմամբ աշխատող տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումներին եւ կլանման տեխնոլոգիայի կիրառմամբ աշխատող տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումներին.
5. բոլոր տեսակների արտադրանքի համար՝ այն բանի ստուգումը, թե արդյոք նշված աղբյուրների ավելի նոր տարբերակներ հասանելի են ԳՏՆ արժեքների համար.
6. բոլոր տեսակների արտադրանքի համար՝ ստուգման ընթացակարգի դեպքում ընդունելի թույլատրելի շեմերի արժեքը՝ էներգասպառման չափված արժեքի համար:

### *Հոդված 8*

#### **Ուժի մեջ մտնելը**

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակմանը հաջորդող քսաներորդ օրը:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2015 թվականի մայիսի 5-ին:

*Հանձնաժողովի կողմից՝*

*Նախագահ*

Ժան-Կլոդ ՅՈՒՆԿԵՐ

---

*ՀԱՎԵԼՎԱԾ 22***II-ից XII հավելվածների համար կիրառելի սահմանումները**

II-XII հավելվածների նպատակով կիրառվում են հետևյալ սահմանումները.

**Մասնագիտացված սառնարանային պահարաններին եւ արագ սառեցման պահարաններին առնչվող սահմանումները**

- 1) «գուտ ծավալ» նշանակում է առավելագույն բեռնվածքի դեպքում սննդամթերք պարունակող ծավալը.
- 2) «պաղեցման աշխատանքային ջերմաստիճան» նշանակում է, որ խցիկում պահվող սննդամթերքի ջերմաստիճանը շարունակաբար պահպանվում է  $-1\text{ }^{\circ}\text{C}$ -ից  $5\text{ }^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի սահմաններում.
- 3) «սառեցման աշխատանքային ջերմաստիճան» նշանակում է, որ խցիկում պահվող սննդամթերքի ջերմաստիճանը շարունակաբար պահպանվում է  $-15\text{ }^{\circ}\text{C}$ -ից ցածր ջերմաստիճանում, որը համարվում է ամենատաք փաթեթվածքի փորձարկման դեպքում ամենաբարձր ջերմաստիճանը.
- 4) «բազմակի օգտագործման խցիկ» նշանակում է, որ մասնագիտացված սառնարանային պահարանի կամ նույն պահարանի առանձին խցիկի համար կարելի է սահմանել տարբեր ջերմաստիճաններ՝ պաղեցված կամ սառեցված սննդամթերքի համար.
- 5) «համակցված խցիկ» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան, որը բաղկացած է սննդամթերքի սառեցման եւ պահպանման համար տարբեր ջերմաստիճաններ ունեցող երկու կամ ավելի խցիկներից.
- 6) «սառնարան-սառցարան» նշանակում է համակցված տիպի պահարան, որը բաղկացած է առնվազն մեկ խցիկից, որը նախատեսված է բացառապես

պաղեցման աշխատանքային ջերմաստիճանի համար, եւ մեկ խցիկից, որը նախատեսված է բացառապես սառեցման աշխատանքային ջերմաստիճանի համար.

- 7) «ուղղահայաց պահարան» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան, որի ընդհանուր բարձրությունը հավասար է 1 050 մմ-ի կամ բարձր է դրանից, ունի միեւնույն խցիկին մուտքի հասանելիություն ապահովող մեկ կամ մի քանի դիմային դռներ կամ դարակներ.
- 8) «կանգնակ տիպի պահարան» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան, որի ընդհանուր բարձրությունը ցածր է 1 050 մմ-ից, ունի միեւնույն խցիկին մուտքի հասանելիություն ապահովող մեկ կամ մի քանի դիմային դռներ կամ դարակներ.
- 9) «թույլ հզորությամբ պահարան», հայտնի է նաեւ «կիսամասնագիտացված պահարան» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարան, որը միայն կարող է իր բոլոր խցիկներում (խցիկում) շարունակաբար պահպանել պաղեցման կամ սառեցման աշխատանքային ջերմաստիճան՝ կլիմայական 3-րդ դասին համապատասխանող միջավայրի պայմաններում, ինչպես նշված է IV հավելվածի 3-րդ աղյուսակում. եթե պահարանը կարող է ջերմաստիճանը պահպանել կլիմայական 4-րդ դասին համապատասխանող միջավայրի պայմաններում, ապա այն չի համարվում թույլ հզորությամբ պահարան.
- 10) «մասնագիտացված սառնարանային պահարանին համարժեք պահարան» նշանակում է մասնագիտացված սառնարանային պահարանի մոդել, որը շուկայահանվել է միեւնույն զուտ ծավալով, միեւնույն տեխնիկական, արդյունավետության եւ շահագործման բնութագրերով եւ միեւնույն տիպի խցիկներով ու ծավալներով, ինչ մասնագիտացված սառնարանային պահարանի մեկ այլ մոդել, որը շուկայահանվել է տարբեր առետրային ծածկագրի համարների ներքո միեւնույն արտադրողի կողմից.

- 11) «արագ սառեցման պահարանին համարժեք պահարան» նշանակում է արագ սառեցման պահարանի մոդել, որը շուկայահանվել է միեւնույն տեխնիկական, արդյունավետության եւ շահագործման բնութագրերով, ինչ արագ սառեցման պահարանի մեկ այլ մոդել, որը շուկայահանվել է տարբեր առետրային ծածկագրի համարների ներքո միեւնույն արտադրողի կողմից:

### **Կոնդենսացնող սարքերին առնչվող սահմանումները**

- 12) «հովացման դրվածքային հզորություն» ( $P_A$ ) նշանակում է հովացման այն հզորությունը, որին գոլորշու խտացման շրջափուլը հասնում է կոնդենսացնող սարքի օգնությամբ՝ գոլորշիչին եւ դրոսելային սարքին միացված լինելու, լրիվ բեռնվածքով աշխատելու դեպքում, ինչպես նաեւ փորձարկման ստանդարտ պայմաններում, միջավայրի հաշվարկային  $32\text{ }^\circ\text{C}$  ջերմաստիճանում չափվելու դեպքում՝ արտահայտված մինչեւ հարյուրերորդականը կլորացված կՎտ-ով.
- 13) «մուտքային դրվածքային հզորություն» ( $D_A$ ) նշանակում է մուտքային էլեկտրաէներգիայի այն անհրաժեշտ հզորությունը, որի միջոցով կոնդենսացնող սարքը (այդ թվում՝ կոմպրեսորը, կոնդենսատորի օդափոխիչ(ներ)ը եւ հնարավոր օժանդակ մասերը) պետք է ապահովի հովացման դրվածքային հզորություն՝ արտահայտված մինչեւ հարյուրերորդականը կլորացված կՎտ-ով.
- 14) «արդյունավետության դրվածքային գործակից» ( $U_{FA}$ ) նշանակում է կՎտ-ով արտահայտված հովացման դրվածքային հզորությունը՝ բաժանած մինչեւ հարյուրերորդականը կլորացված կՎտ-ով արտահայտված մուտքային դրվածքային հզորությանը.
- 15) «արդյունավետության  $U_{FB}$ ,  $U_{FC}$  եւ  $U_{FD}$  ցուցանիշերի գործակիցներ» նշանակում է կՎտ-ով արտահայտված հովացման հզորությունը՝ բաժանած մինչեւ հարյուրերորդականը կլորացված կՎտ-ով արտահայտված մուտքային հզորությանը՝ B, C եւ D գնահատման ինդեքսների դեպքում.



- 16) «սեզոնային էներգետիկ ցուցանիշերի գործակից» (ՍԷՏԳ) նշանակում է փորձարկման ստանդարտ պայմաններում հովացում ապահովելու համար կոնդենսացնող սարքի արդյունավետության գործակից, որը բնորոշ է բեռնվածքի եւ ողջ տարվա ընթացքում միջավայրի ջերմաստիճանի տատանումներին եւ հաշվարկվում է որպես տարեկան հովացում ապահովելու պահանջարկի եւ էլեկտրաէներգիայի տարեկան սպառման միջեւ եղած գործակից՝ արտահայտված մինչեւ հարյուրերորդականը կլորացված թվով.
- 17) «տարեկան հովացման պահանջարկ» նշանակում է յուրաքանչյուր բինին բնորոշ հովացման պահանջարկի հանրագումարը՝ բազմապատկած բին/ժամերի համապատասխան թվով.
- 18) «բինին բնորոշ հովացման պահանջարկ» նշանակում է տարվա ընթացքում յուրաքանչյուր բինի մասով հովացման պահանջարկը, որը հաշվարկվում է՝ հովացման դրվածքային հզորությունը բազմապատկելով մասնակի բեռնվածքի գործակցով՝ արտահայտված մինչեւ հարյուրերորդականը կլորացված կՎտ-ով.
- 19) «մասնակի բեռնվածք» (Pc(Tj)) նշանակում է Tj միջավայրի սահմանված ջերմաստիճանի դեպքում հովացման բեռնվածքը, որը հաշվարկվում է լրիվ բեռնվածքի գործակիցը մասնակի բեռնվածքի գործակցով բազմապատկելով, որը համապատասխանում է Tj միջավայրի միեւնույն ջերմաստիճանին եւ արտահայտվում է մինչեւ հարյուրերորդականը կլորացված կՎտ-ով.
- 20) «մասնակի բեռնվածքի գործակից» (UF(Tj)) միջավայրի սահմանված ջերմաստիճանի դեպքում Tj նշանակում է Tj միջավայրի ջերմաստիճան՝ հանած 5 °C, բաժանած միջավայրի հաշվարկային ջերմաստիճանի՝ հանած 5 °C, իսկ միջին ջերմաստիճանի դեպքում՝ բազմապատկած 0,4-ով եւ ավելացրած 0,6, իսկ ցածր ջերմաստիճանի դեպքում՝ բազմապատկած

0,2-ով եւ ավելացրած 0,8: Միջավայրի հաշվարկային ջերմաստիճանից բարձր միջավայրի ջերմաստիճանի դեպքում մասնակի բեռնվածքի գործակիցը կազմում է 1: 5 °C-ից ցածր միջավայրի ջերմաստիճանի դեպքում մասնակի բեռնվածքի գործակիցը կազմում է 0,6՝ միջին ջերմաստիճանի դեպքում, եւ 0,8՝ ցածր ջերմաստիճանի դեպքում: Մասնակի բեռնվածքի գործակիցը կարող է արտահայտվել հազարերորդականով կամ տոկոսով, 100-ով բազմապատկելուց հետո՝ տասնորդականով.

- 21) «էլեկտրաէներգիայի տարեկան սպառում»-ը հաշվարկվում է որպես յուրաքանչյուր բինին բնորոշ հովացման պահանջարկի գործակցի եւ բինին բնորոշ արդյունավետության համապատասխան գործակցի հանրագումար՝ բազմապատկած բին/ժամերի համապատասխան թվով.
- 22) «միջավայրի ջերմաստիճան» նշանակում է օդի ջերմաստիճանն ըստ չոր ջերմաչափի՝ արտահայտված Ցելսիուսի սանդղակով.
- 23) «բին» (բինյ) նշանակում է Tj միջավայրի ջերմաստիճանի եւ hj բին/ժամերի համադրությունը, ինչպես նշված է VI հավելվածի 6-րդ աղյուսակում.
- 24) «բին/ժամեր» (hj) նշանակում է տարեկան կտրվածքով այն ժամերը, որոնց ընթացքում միջավայրի ջերմաստիճան է ապահովվում յուրաքանչյուր բինի համար, ինչպես նշված է VI հավելվածի 6-րդ աղյուսակում.
- 25) «միջավայրի հաշվարկային ջերմաստիճան» նշանակում է ըստ Ցելսիուսի սանդղակի միջավայրի այն ջերմաստիճանը, որի դեպքում մասնակի բեռնվածքի գործակիցը հավասար է 1-ի: Ջերմաստիճանը սահմանվում է 32 °C.
- 26) «բինին բնորոշ արդյունավետության գործակից» (ԱԳj) նշանակում է տարվա ընթացքում յուրաքանչյուր բինի արդյունավետության գործակիցը, որը ձեւավորվում է մասնակի բեռնվածքից, հովացման նոմինալ պահանջարկից եւ նմուշային բիների արդյունավետության նոմինալ գործակցից, գծային միջարկման միջոցով հաշվարկվում է այլ բիների համար եւ անհրաժեշտության դեպքում ճշգրտվում է նվազման գործակցով.

- 27) «հովացման նոմինալ պահանջարկ» նշանակում է սահմանափակ թվով նմուշային բիների մասով հովացման պահանջարկը, որը հաշվարկված է հովացման դրվածքային հզորությունը համապատասխան մասնակի բեռնվածքի գործակցով բազմապատկելու միջոցով.
- 28) «արդյունավետության նոմինալ գործակից» նշանակում է սահմանափակ թվով նմուշային բիների մասով արդյունավետության գործակիցը, որը հաշվարկված է հովացման նոմինալ հզորությունը մուտքային նոմինալ հզորությանը բաժանելու միջոցով.
- 29) «հովացման նոմինալ հզորություն» նշանակում է հովացման այն հզորությունը, որը սարքը մատակարարում է սահմանափակ թվով նմուշային բիների մասով հովացման սահմանված պահանջարկը բավարարելու համար՝ արտահայտված մինչև հարյուրերորդականը կլորացված կՎտ-ով.
- 30) «մուտքային նոմինալ հզորություն» նշանակում է մուտքային էլեկտրաէներգիան, որն անհրաժեշտ է կոնդենսացնող սարքին՝ հովացման նոմինալ հզորությունն ապահովելու համար՝ արտահայտված մինչև հարյուրերորդականը կլորացված կՎտ-ով.
- 31) «նվազման գործակից» (C<sub>նգ</sub>) սահմանվում է 0,25 եւ նշանակում է կոնդենսացնող սարքերի հնարավոր ցիկլային միացումների/անջատումների հետեւանքով արդյունավետության կորստի չափը, որն անհրաժեշտ է պահանջվող մասնակի բեռնվածքն ապահովելու համար այն դեպքում, եթե սարքի հզորության հսկիչ համակարգը չի կարող բեռնաթափվել մինչև պահանջվող մասնակի բեռնվածքի շեմը.
- 32) «հզորության հսկողություն» նշանակում է սառնազդակի հոսքի ծավալային արագությունը փոփոխելու միջոցով իր ծավալը փոխելու կոնդենսացնող սարքի ունակությունը, որը պետք է նշվի «ֆիքսված» այն դեպքում, եթե սարքը չի կարող փոփոխել իր հոսքի ծավալային արագությունը, «փոփոխել», եթե հոսքի ծավալային արագությունը փոփոխվում կամ տատանվում է

երկուսից ոչ ավելի քայլերի հաջորդականությամբ, կամ «փոփոխական», եթե հոսքի ծավալային արագությունը փոփոխվում կամ տատանվում է երեք կամ ավելի քայլերի հաջորդականությամբ.

### **Տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումներին առնչվող սահմանումները**

- 33) «հովացման դրվածքային հզորություն» ( $P_A$ ) նշանակում է արտահայտված մինչեւ հարյուրերորդականը կլորացված կՎտ-ով այն հովացման հզորությունը, որը տեխնոլոգիական պաղեցման սարքավորումը կարող է ապահովել լրիվ բեռնվածքով աշխատելու դեպքում, ինչպես նաեւ փորձարկման ստանդարտ պայմաններում չափվելու դեպքում՝ միջավայրի հաշվարկային  $35\text{ }^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում՝ օդով պաղեցման սարքավորումների համար, եւ կոնդենսատորի  $30\text{ }^{\circ}\text{C}$  ջրի մուտքային ջերմաստիճանում՝ ջրով պաղեցման սարքավորումների համար.
- 34) «մուտքային դրվածքային հզորություն» ( $D_A$ ) նշանակում է մուտքային էլեկտրաէներգիայի այն անհրաժեշտ հզորությունը, որի միջոցով տեխնոլոգիական պաղեցման սարքավորումը (այդ թվում՝ կոմպրեսորը, կոնդենսատորի օդափոխիչ(ներ)ը կամ պոմպ(եր)ը, գոլորշիչի պոմպ(եր)ը եւ հնարավոր օժանդակ մասերը) պետք է ապահովի հովացման դրվածքային հզորություն՝ արտահայտված մինչեւ հարյուրերորդականը կլորացված կՎտ-ով.
- 35) «էներգաարդյունավետության դրվածքային գործակից» ( $E_{LFA}$ ) նշանակում է կՎտ-ով արտահայտված հովացման դրվածքային հզորությունը՝ բաժանած մինչեւ հարյուրերորդականը կլորացված կՎտ-ով արտահայտված մուտքային դրվածքային հզորությանը.
- 36) «սեզոնային էներգետիկ ցուցանիշերի գործակից» ( $UE_{SF}$ ) նշանակում է փորձարկման ստանդարտ պայմաններում հովացում ապահովելու համար տեխնոլոգիական պաղեցման սարքավորման արդյունավետության

գործակից, որը բնորոշ է բեռնվածքի եւ ողջ տարվա ընթացքում միջավայրի ջերմաստիճանի տատանումներին եւ հաշվարկվում է որպես տարեկան հովացում ապահովելու պահանջարկի եւ էլեկտրաէներգիայի տարեկան սպառման միջեւ եղած գործակից՝ արտահայտված մինչեւ հարյուրերորդականը կլորացված թվով.

37) «տարեկան հովացման պահանջարկ» նշանակում է յուրաքանչյուր բինին բնորոշ հովացման պահանջարկի հանրագումարը՝ բազմապատկած բին/ժամերի համապատասխան թվով.

38) «բինին բնորոշ հովացման պահանջարկ» նշանակում է տարվա ընթացքում յուրաքանչյուր բինի մասով հովացման դրվածքային հզորությունը՝ բազմապատկած մասնակի բեռնվածքի գործակցով՝ արտահայտված մինչեւ հարյուրերորդականը կլորացված կՎտ-ով.

39) «մասնակի բեռնվածք» ( $P_c(T_j)$ ) նշանակում է  $T_j$  միջավայրի սահմանված ջերմաստիճանի դեպքում հովացման բեռնվածքը, որը հաշվարկվում է լրիվ բեռնվածքի գործակիցը մասնակի բեռնվածքի գործակցով բազմապատկելով, որը համապատասխանում է  $T_j$  միջավայրի միեւնույն ջերմաստիճանին եւ արտահայտվում է մինչեւ հարյուրերորդականը կլորացված կՎտ-ով.

40) «մասնակի բեռնվածքի գործակից» ( $U_F(T_j)$ )՝  $T_j$  միջավայրի սահմանված ջերմաստիճանի դեպքում նշանակում է՝

ա) օդով պաղեցման կոնդենսատորով աշխատող տեխնոլոգիական պաղեցման սարքավորումների համար  $T_j$  միջավայրի ջերմաստիճան՝ հանած  $5\text{ }^{\circ}\text{C}$ , բաժանած միջավայրի հաշվարկային ջերմաստիճանի, հանած  $5\text{ }^{\circ}\text{C}$  եւ բազմապատկած 0,2-ով եւ ավելացրած 0,8: Միջավայրի հաշվարկային ջերմաստիճանից բարձր միջավայրի ջերմաստիճանի դեպքում մասնակի բեռնվածքի գործակիցը կազմում է 1: Միջավայրի՝  $5\text{ }^{\circ}\text{C}$ -ից ցածր ջերմաստիճանի դեպքում մասնակի բեռնվածքի գործակիցը կազմում է 0,8.

բ) ջրով պաղեցման կոնդենսատորով աշխատող տեխնոլոգիական պաղեցման սարքավորումների համար Tj ջրի մուտքային ջերմաստիճան՝ հանած 9 °C, բաժանած ջրի մուտքային հաշվարկային ջերմաստիճանի (30 °C), հանած 9 °C, բազմապատկած 0,2-ով եւ ավելացրած 0,8: Միջավայրի հաշվարկային ջերմաստիճանից բարձր միջավայրի ջերմաստիճանի դեպքում մասնակի բեռնվածքի գործակիցը կազմում է 1: Միջավայրի՝ 5 °C-ից ցածր ջերմաստիճանի դեպքում (կոնդենսատորի մեջ ջրի 9 °C մուտքային ջերմաստիճան) մասնակի բեռնվածքի գործակիցը կազմում է 0,8:

Մասնակի բեռնվածքի գործակիցը կարող է արտահայտվել հազարերորդականով կամ տոկոսով, 100-ով բազմապատկելուց հետո՝ տասնորդականով.

41) «Էլեկտրաէներգիայի տարեկան սպառում»-ը հաշվարկվում է որպես յուրաքանչյուր բինին բնորոշ հովացման պահանջարկի գործակցի եւ բինին բնորոշ էներգաարդյունավետության համապատասխան գործակցի հանրագումար՝ բազմապատկած բին/ժամերի համապատասխան թվով.

42) «միջավայրի ջերմաստիճան» նշանակում է՝

ա) օդով պաղեցման կոնդենսատորով աշխատող տեխնոլոգիական պաղեցման սարքավորումների համար՝ օդի ջերմաստիճանն ըստ չոր ջերմաչափի՝ արտահայտված Ցելսիուսի սանդղակով.

բ) ջրով պաղեցման կոնդենսատորով աշխատող տեխնոլոգիական պաղեցման սարքավորումների համար՝ կոնդենսատորի մեջ ջրի մուտքային ջերմաստիճանը՝ արտահայտված Ցելսիուսի սանդղակով.

43) «բին» (բինյ) նշանակում է Tj միջավայրի ջերմաստիճանի եւ hj բին/ժամերի համադրությունը, ինչպես նշված է VIII հավելվածում.

44) «բին/ժամեր» (hj) նշանակում է տարեկան կտրվածքով այն ժամերը, որոնց ընթացքում միջավայրի ջերմաստիճան է ապահովվում յուրաքանչյուր բինի համար, ինչպես նշված է VIII հավելվածում.

- 45) «միջավայրի հաշվարկային ջերմաստիճան» նշանակում է ըստ Ցելսիուսի սանդղակի միջավայրի այն ջերմաստիճանը, որի դեպքում մասնակի բեռնվածքի գործակիցը հավասար է 1-ի: Ջերմաստիճանը սահմանվում է 35 °C: Օդով պաղեցման միջոցով աշխատող տեխնոլոգիական պաղեցման սարքավորումների համար կոնդենսատորին տրվող օդի մուտքային ջերմաստիճանն այս դեպքում սահմանվում է 35 °C, իսկ ջրով պաղեցման միջոցով աշխատող տեխնոլոգիական պաղեցման սարքավորումների համար կոնդենսատորին տրվող ջրի մուտքային ջերմաստիճանը սահմանվում է 30 °C.
- 46) «բինին բնորոշ էներգաարդյունավետության գործակից» (ԷԱԳ) նշանակում է տարվա ընթացքում յուրաքանչյուր բինի էներգաարդյունավետության գործակիցը, որը ձեւավորվում է մասնակի բեռնվածքից, հովացման նոմինալ պահանջարկից եւ նմուշային բիների էներգաարդյունավետության նոմինալ գործակցից, գծային միջարկման միջոցով հաշվարկվում է այլ բիների համար եւ անհրաժեշտության դեպքում ճշգրտվում է նվազման գործակցով.
- 47) «հովացման նոմինալ պահանջարկ» նշանակում է սահմանափակ թվով նմուշային բիների մասով հովացման պահանջարկը, որը հաշվարկված է հովացման դրվածքային հզորությունը համապատասխան մասնակի բեռնվածքի գործակցով բազմապատկելու միջոցով.
- 48) «էներգաարդյունավետության նոմինալ գործակից» նշանակում է սահմանափակ թվով նմուշային բիների համար էներգաարդյունավետության գործակից.
- 49) «մուտքային նոմինալ հզորություն» նշանակում է մուտքային էլեկտրաէներգիան, որն անհրաժեշտ է տեխնոլոգիական պաղեցման սարքավորմանը՝ հովացման նոմինալ հզորությունն ապահովելու համար.
- 50) «հովացման նոմինալ հզորություն» նշանակում է պաղեցման սարքավորման կողմից մատակարարվող հովացման հզորությունը, որն անհրաժեշտ է հովացման նոմինալ պահանջարկն ապահովելու համար.

- 51) «նվազման գործակից» (Cc) նշանակում է տեխնոլոգիական պաղեցման սարքավորումների՝ մասնակի բեռնվածքով ընթացող ցիկլային աշխատանքի հետեանքով արդյունավետության կորստի չափը. եթե Cc-ն չի սահմանվում չափման միջոցով, ապա նվազման դեֆոլտային գործակիցը կազմում է  $Cc = 0,9$ .
- 52) «հզորության հսկողություն» նշանակում է սառնազդակի հոսքի ծավալային արագությունը փոփոխելու միջոցով իր ծավալը փոխելու տեխնոլոգիական պաղեցման սարքավորման ունակությունը, որը պետք է նշվի «ֆիքսված» այն դեպքում, երբ տեխնոլոգիական պաղեցման սարքավորումը չի կարող փոփոխել իր հոսքի ծավալային արագությունը, «փոլային», եթե հոսքի ծավալային արագությունը փոփոխվում կամ տատանվում է երկուսից ոչ ավելի քայլերի հաջորդականությամբ, կամ «փոփոխական», եթե հոսքի ծավալային արագությունը փոփոխվում կամ տատանվում է երեք կամ ավելի քայլերի հաջորդականությամբ.

### **Ընդհանուր սահմանումներ**

- 53) «գլոբալ տաքացման ներուժ» (ԳՏՆ) նշանակում է գոլորշու խտացման շրջափուլում կիրառվող 1 կգ սառնազդակի՝ գլոբալ տաքացմանը նպաստող չափը՝ արտահայտված  $CO_2$ -ի կգ համարժեքով՝ 100 տարվա կտրվածքով.
- 54) Ֆտորացված սառնազդակների համար ԳՏՆ արժեքները պետք է լինեն Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական խորհրդի (ԿՓՄԽ) կողմից ընդունված՝ Չորրորդ գնահատման հաշվետվության մեջ հրապարակված արժեքները<sup>1</sup> (2007 ԿՓՄԽ ԳՏՆ արժեքներ՝ 100 տարվա ժամանակահատվածի համար).

---

<sup>1</sup> ԿՓՄԽ-ի՝ Կլիմայի փոփոխությանն առնչվող 2007 թվականի Չորրորդ գնահատում, Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական խորհրդի հաշվետվություն.  
[http://www.ipcc.ch/publications\\_and\\_data/publications\\_and\\_data\\_reports.shtml](http://www.ipcc.ch/publications_and_data/publications_and_data_reports.shtml)



- 55) ոչ ֆտորացված գազերի համար ԳՏՆ արժեքները ԿՓՄԽ առաջին գնահատման մեջ 100 տարվա ժամանակահատվածի համար հրապարակված արժեքներն են.
- 56) սառնազդակների խառնուրդների համար ԳՏՆ արժեքները պետք է հիմնվեն թիվ 842/2006 (ԵՀ) կանոնակարգի I հավելվածում նշված բանաձևի վրա՝ Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական խորհրդի կողմից ընդունված՝ Չորրորդ գնահատման հաշվետվության արժեքների հետ միասին (2007 ԿՓՄԽ ԳՏՆ արժեքներ՝ 100 տարվա ժամանակահատվածի համար).
- 57) վերոհիշյալ հղումներում չնշված սառնազդակների համար՝ Մոնրեալի արձանագրության համաձայն՝ Գնահատման գիտական խորհրդի (ԳԳԽ) 2010 թվականի գնահատման հաշվետվությունը<sup>2</sup> եւ «Սառեցման, օդորակման եւ ջերմային պոմպերի մասին» ՄԱՇՄԾ-ի 2010 թվականի հաշվետվությունը,<sup>3</sup> կամ նախքան ուժի մեջ մտնելն առկա լինելու դեպքում՝ որպես հղում կկիրառվեն ավելի նոր տարբերակներ:

---

---

<sup>2</sup> [http://ozone.unep.org/Assessment\\_Panels/SAP/Scientific\\_Assessment\\_2010/index.shtml](http://ozone.unep.org/Assessment_Panels/SAP/Scientific_Assessment_2010/index.shtml)

<sup>3</sup> <http://ozone.unep.org/teap/Reports/RTOC/>

*ՀԱՎԵԼՎԱԾ II***Մասնագիտացված սառնարանային պահարաններին եւ արագ սառեցման պահարաններին ներկայացվող էկոնախագծման պահանջները****1. ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

ա) Սույն կանոնակարգի շրջանակներում մասնագիտացված սառնարանային պահարանները, բացառությամբ գերիզոր պահարանների եւ սառնարան-սառցարանների, պետք է համապատասխանեն էներգաարդյունավետության հետեւյալ ինդեքսների (ԷԱԻ) սահմանանիշերին՝

i) 2016 թվականի հուլիսի 1-ից՝ ԷԱԻ < 115

ii) 2018 թվականի հունվարի 1-ից՝ ԷԱԻ < 95

iii) 2019 թվականի հուլիսի 1-ից՝ ԷԱԻ < 8 5

Մասնագիտացված սառնարանային պահարանի ԷԱԻ-ն պետք է հաշվարկվի III հավելվածում նկարագրված ընթացակարգի համաձայն:

բ) 2016 թվականի հուլիսի 1-ից գերիզոր պահարանների ԷԱԻ-ն պետք է լինի 115-ից ցածր:

**2. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

ա) 2016 թվականի հուլիսի 1-ից մասնագիտացված սառնարանային պահարանների մասով պետք է տրամադրվի արտադրանքի տեխնիկական բնութագիրը՝ դրանց տեղադրողների եւ վերջնական սպառողների համար հրահանգների բուկլետում, ինչպես նաեւ արտադրողների, նրանց լիազորված ներկայացուցիչների եւ ներկրողների՝ ազատ հասանելիություն ունեցող կայքերում:

- i) սարքավորման կատեգորիան, մասնավորապես՝ արդյոք այն ուղղահայաց տիպի է, թե կանգնակ տիպի.
- ii) կիրառելիության դեպքում՝ արդյոք պահարանը գերիզոր է, թույլ հզորությամբ, թե սառնարան-սառցարան է.
- iii) պահարանի նախատեսված աշխատանքային ջերմաստիճանը (ջերմաստիճանները)՝ պաղեցման, սառեցման կամ բազմակի օգտագործման.
- iv) յուրաքանչյուր խցիկի զուտ ծավալը՝ արտահայտված լիտրերով եւ կլորացված մինչեւ տասնորդականը.
- v) պահարանի տարեկան էներգասպառումը՝ արտահայտված տարեկան կտրվածքով կՎտժ-ով.
- vi) պահարանի, բացառությամբ սառնարան-սառցարանների, էներգաարդյունավետության ինդեքսն այն դեպքում, երբ օրական ինդիկատիվ էներգասպառումը սահմանվում է՝ բացառապես պաղեցման աշխատանքային ջերմաստիճանում աշխատելու համար նախատեսված խցիկները պաղեցման աշխատանքային ջերմաստիճանում փորձակելու միջոցով, իսկ բացառապես սառեցման աշխատանքային ջերմաստիճանում աշխատելու համար նախատեսված խցիկները՝ պաղեցման աշխատանքային ջերմաստիճանում փորձակելու միջոցով.
- vii) թույլ հզորությամբ պահարանների համար նշվում է հետեւյալը. «Այս սարքավորումը նախատեսված է միջավայրի մինչեւ 25 °C ջերմաստիճանում օգտագործման համար եւ հետեւաբար պիտանի չէ մասնագիտացված տաք խոհանոցներում օգտագործման համար».
- viii) գերիզոր պահարանների համար նշվում է հետեւյալը. «Այս սարքավորումը նախատեսված է միջավայրի մինչեւ 40 °C ջերմաստիճանում օգտագործման համար».

- ix) հատուկ նախազգուշական ցանկացած միջոց, որը պետք է ձեռնարկել պահարանի օգտագործման եւ պահպանման դեպքում՝ դրա էներգաարդյունավետությունն օպտիմալացնելու նպատակով.
- x) պահարանում պարունակվող հեղուկ սառնազդակի տեսակը, անվանումը եւ գլոբալ տաքացման ներուժը (ԳՏՆ).
- xi) սառնազդակի լիցքը՝ արտահայտված կգ-ով եւ կլորացված մինչեւ հարյուրերորդականը.
- xii) շահագործման ժամկետի ավարտից հետո վերաշրջանառությանը կամ օգտահանմանն առնչվող տեղեկությունները:

Ստորեւ բերված 1-ին աղյուսակում ներկայացված է պահանջվող տեղեկությունների ինդիկատիվ կառուցվածքը

*Աղյուսակ 1*

**Մասնագիտացված սառնարանային պահարաններին ներկայացվող տեղեկատվական պահանջները**

Մոդել (ներ)՝ [այն մոդելը (ները) ներկայացնող տեղեկությունները, որին առնչվում են այդ տեղեկությունները]			
Նպատակային նշանակությունը	<b>Պահպանումը</b>		
Աշխատանքային ջերմաստիճանը (ջերմաստիճանները)	պաղեցման/սառեցման/բազմակի օգտագործման		
Կատեգորիան	Ուղղահայաց/կանգնակ		
(կիրառելիության դեպքում) Գերիզոր/թույլ հզորությամբ			
Հեղուկ սառնազդակը (սառնազդակները)՝ [հեղուկ սառնազդակը (սառնազդակները) սահմանող տեղեկությունները, այդ թվում՝ ԳՏՆ-ն]			
Անվանում	Պայմանանշան	Արժեք	Միավոր
<b>Տարեկան էներգասպառում</b>	<i>SEU</i>	x,xx	կՎտժ
<b>Էներգաարդյունավետության ինդեքս</b>	<i>EUE</i>	x,xx	
<b>Զուտ ծավալ</b>	Ծգ	x,x	լիտր
(կիրառելիության դեպքում)			

Պաղեցման ծավալ	$\sigma_{N<w_2}$	x,x	լիտր
Սառեցման ծավալ	$\sigma_{NUsm}$	x,x	լիտր
Սառնագրակի լիցք		x,xx	կգ
Կոնտակտային տվյալները	Արտադրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի անունը եւ հասցեն.		

- բ) 2016 թվականի հուլիսի 1-ից մասնագիտացված սառնարանային պահարանների մասով պետք է ապահովվի արտադրողների՝ ազատ հասանելիություն ունեցող կայքերի բաժին՝ պահարանների տեղադրողների եւ այլ մասնագետների, նրանց լիազորված ներկայացուցիչների կամ ներկրողների համար, որում ներառված կլինեն տեղեկություններ՝ հետեւյալի առնչությամբ՝
- i) տեղադրում՝ սարքավորումների էներգաարդյունավետությունն օպտիմալացնելու նպատակով.
  - ii) անվնաս կազմատում՝ պահելու նպատակով.
  - iii) կազմատում եւ ապամոնտաժում՝ շահագործման ժամկետի ավարտից հետո օգտահանելու նպատակով.
- գ) 2016 թվականի հուլիսի 1-ից արագ սառեցման պահարանների մասով պետք է տրամադրվի արտադրանքի հետեւյալ ինդիկատիվ տեխնիկական բնութագիրը՝ դրանց տեղադրողների եւ վերջնական սպառողների համար հրահանգների բուկլետում, ինչպես նաեւ արտադրողների, նրանց լիազորված ներկայացուցիչների եւ ներկրողների՝ ազատ հասանելիություն ունեցող կայքերում.
- i) պահարանի՝ լրիվ բեռնվածքով աշխատելու տարողությունը՝ արտահայտված սննդամթերքի կգ-ով եւ կլորացված մինչեւ հարյուրերորդականը.
  - ii) ստանդարտ ջերմաստիճանի ցիկլը, ինչը նշանակում է ջերմաստիճանների նվազման այն միջակայքը, որի տիրույթում

նախատեսվում է սննդամթերքի հովացումը եւ դա կատարելու համար անհրաժեշտ բույաների քանակը.

- iii) էներգասպառումը՝ սննդամթերքի յուրաքանչյուր կգ-ի համար կՎտԺ-ով, ստանդարտ ջերմաստիճանի ցիկլի համար եւ կլորացված մինչեւ հարյուրերորդականը.
  - iv) անբաժանելի սարքավորման դեպքում՝ պահարանում պարունակվող հեղուկ սառնազդակի տեսակը, անվանումը եւ ԳՏՆ-ն, ինչպես նաեւ սառնազդակի լիցքը (կգ-ով)՝ կլորացված մինչեւ հարյուրերորդականը: Հեռահար կոնդենսացնող սարքի (չի մատակարարվում հենց արագ սառեցման պահարանի հետ) հետ միասին օգտագործելու համար նախատեսված սարքավորումների դեպքում՝ սառնազդակի նախատեսված լիցքը՝ առաջարկվող կոնդենսացնող սարքի հետ միասին օգտագործելիս, եւ նախատեսված հեղուկ սառնազդակի տեսակը, անվանումը եւ ԳՏՆ-ն.
- դ) 4-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխանության գնահատման նպատակով տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն հետեւյալ տարրերը՝
- i) «ա» եւ «գ» կետերում սահմանված տարրերը՝ համապատասխանաբար մասնագիտացված սառնարանային պահարանների եւ արագ սառեցման պահարանների համար.
  - ii) եթե կոնկրետ մոդելի վերաբերյալ տեխնիկական փաստաթղթերի փաթեփում ներառված տեղեկություններն ստացվել են նախագծման հիման վրա կատարված հաշվարկի արդյունքում կամ համարժեք սառեցնող այլ սարքավորումներից արտարկման միջոցով կամ այդ երկու միջոցներով էլ, ապա փաստաթղթերը պետք է ներառեն այդ հաշվարկների կամ արտարկումների կամ

այդ երկուսի մանրամասները, ինչպես նաև կատարված հաշվարկների ճշգրտությունը ստուգելու համար մատակարարների կողմից կատարված ստուգումների մանրամասները: Տեղեկությունները պետք է ներառեն նաև համարժեք բոլոր այլ մոդելների ցանկը, որոնց առնչվող տեղեկություններն ստացվել են նույն եղանակով.

- iii) այս տեխնիկական փաստաթղթերում ներառված տեղեկությունները կարելի է համակցել Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2010/30/ԵՀ հրահանգի համաձայն<sup>1</sup> սահմանված միջոցներին համապատասխան ներկայացված տեխնիկական փաստաթղթերի հետ:

---

---

<sup>1</sup> «Էներգիա սպառող արտադրանքի կողմից էներգիայի և այլ ռեսուրսների սպառման վերաբերյալ՝ պիտակավորման և արտադրանքի ստանդարտ տեխնիկական բնութագրի միջոցով նշում կատարելու մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի 2010/30/ԵՄ հրահանգ (ՊՏ L 153, 18.6.2010թ., էջ 1):

## ՀԱՎԵԼՎԱԾ

**Մասնագիտացված սառնարանային պահարանների համար  
էներգաարդյունավետության ինդեքսի հաշվարկի մեթոդը**

Մասնագիտացված սառնարանային պահարանի համար էներգաարդյունավետության ինդեքսի (ԷԱԻ) հաշվարկի համար պահարանի տարեկան էներգասպառումը համեմատվում է դրա տարեկան ստանդարտ էներգասպառման հետ:

ԷԱԻ-ն հաշվարկվում է հետևյալ ձևով՝

$$\text{ԷԱԻ} = (\text{ՏԷՍ} / \text{ՍՏԷՍ}) \times 100$$

Որտեղ՝

$$\text{ՏԷՍ} = \text{Է24ժ} \times \text{ուգ} \times 365$$

ՏԷՍ-ն պահարանի տարեկան էներգասպառումն է՝ արտահայտված կՎտժ/տարի կտրվածքով.

Է24ժ-ն պահարանի էներգասպառումն է՝ 24 ժամվա ընթացքում.

*ուգ-ն ուղղիչ գործակիցն է, որը պետք է կիրառվի միայն թույլ հզորությամբ պահարանների համար՝ համաձայն IV հավելվածի 2(բ) կետի*

$$\text{ՍՏԷՍ} = 2 \times \text{Ծգ} + \text{Ք}$$

ՍՏԷՍ-ն պահարանի ստանդարտ տարեկան էներգասպառումն է՝ արտահայտված կՎտժ/տարի կտրվածքով.

Ծգ-ն սարքավորման զուտ ծավալն է, որը պահարանի բոլոր խցիկների զուտ ծավալների հանրագումարն է՝ արտահայտված լիտրերով:

Չափման արժեքը եւ քանակի արժեքը տրված են 2-րդ աղյուսակում:



*Աղյուսակ 2***Չափման եւ քանակի գործակիցների արժեքները**

Կատեգորիա	Չափման արժեք	Քանակի արժեք
Ուղղահայաց տիպի՝ պաղեցնող	1,643	609
Ուղղահայաց տիպի՝ սառեցնող	4,928	1 472
Կանգնակ տիպի՝ պաղեցնող	2,555	1 790
Կանգնակ տիպի՝ սառեցնող	5,840	2 380

*ՀԱՎԵԼՎԱԾ IV***Մասնագիտացված սառնարանային պահարանների  
չափումներն ու հաշվարկները**

1. Սույն կանոնակարգի պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու եւ ստուգելու նպատակներով պետք է իրականացվեն չափումներ եւ հաշվարկներ՝ ներդաշնակեցված այնպիսի ստանդարտների կիրառմամբ, որոնց հղումային համարներն այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում*, կամ հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի այլ մեթոդների կիրառմամբ, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդների վրա: Ինչ վերաբերում է մասնագիտացված սառնարանային պահարաններին, ապա դրանք պետք է համապատասխանեն 2-րդ եւ 3-րդ կետերում սահմանված պայմաններին ու տեխնիկական պարամետրերին:
2. Մասնագիտացված սառնարանային պահարանների տարեկան էներգասպառման արժեքները եւ էներգաարդյունավետության ինդեքսը սահմանելու համար պետք է կատարվեն չափումներ հետևյալ պայմաններով՝
  - ա) Փորձաստուգման փաթեթների ջերմաստիճանը պետք է լինի  $-1\text{ }^{\circ}\text{C}$ -ի եւ  $5\text{ }^{\circ}\text{C}$ -ի միջակայքում՝ պաղեցման պահարանների համար, եւ  $-15\text{ }^{\circ}\text{C}$ -ից ցածր՝ սառեցման պահարանների համար.
  - բ) Միջավայրի պայմանները պետք է համապատասխանեն կլիմայական 4-րդ դասին, ինչպես նշված է 3-րդ աղյուսակում՝ բացառությամբ թույլ հզորությամբ պահարանների, որոնք պետք է փորձաստուգվեն կլիմայական 3-րդ դասին համապատասխանող միջավայրի պայմաններում: Պաղեցման աշխատանքային ջերմաստիճանում թույլ հզորությամբ պահարանների մասով 1,2 ուղղիչ գործակիցը, իսկ սառեցման աշխատանքային ջերմաստիճանում թույլ հզորությամբ

պահարանների մասով 1,1 ուղղիչ գործակիցը պետք է կիրառվեն փորձաստուգման այն արդյունքների մասով, որոնք ձեռք են բերվել թույլ հզորությամբ պահարանների առնչությամբ՝ II հավելվածի 2(ա) կետի համաձայն՝ տեղեկությունների հայտարարագրման նպատակով.

գ) Մասնագիտացված սառնարանային պահարանները պետք է փորձաստուգվեն՝

— պաղեցման աշխատանքային ջերմաստիճանում, եթե համակցված տիպի պահարանը բաղկացած է առնվազն մեկ խցիկից, որը նախատեսված է բացառապես պաղեցման աշխատանքային ջերմաստիճանի համար.

— պաղեցման աշխատանքային ջերմաստիճանում՝ մասնագիտացված սառնարանային պահարանի դեպքում, որն ունի միայն մեկ խցիկ՝ նախատեսված բացառապես պաղեցման աշխատանքային ջերմաստիճանի համար.

— սառեցման աշխատանքային ջերմաստիճանում՝ մյուս բոլոր դեպքերում:

3. Կլիմայական 3-րդ, 4-րդ եւ 5-րդ դասերի միջավայրի պայմանները ներկայացված են 3-րդ աղյուսակում:

### Աղյուսակ 3

#### Կլիմայական 3-րդ, 4-րդ եւ 5-րդ դասերի միջավայրի պայմանները

Փորձարկման խցիկի կլիմայական դասը	Օդի ջերմաստիճանը՝ ըստ չոր ջերմաչափի, °C	Հարաբերական խոնավությունը, %	Ցողի կետը, °C	Ջրային գոլորշու զանգվածը չոր օդում, գ/կգ
3	25	60	16,7	12,0
4	30	55	20,0	14,8
5	40	40	23,9	18,8

## ՀԱՎԵԼՎԱԾ V

## Կոնդենսացնող սարքերին ներկայացվող էկոնախագծման պահանջները

## 1. ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- ա) 2016 թվականի հուլիսի 1-ից կոնդենսացնող սարքերի արդյունավետության գործակիցը (ԱԳ) եւ սեզոնային էներգետիկ ցուցանիշերի գործակիցը (ՍԷՑԳ) չպետք է ցածր լինեն հետևյալ արժեքներից՝

Աշխատանքային ջերմաստիճան	Դրվածքային հզորություն $P_A$	Կիրառելի գործակից	Արժեք
Միջին	$0,2 \text{ կՎտ} \leq P_A \leq 1 \text{ կՎտ}$	ԱԳ	1,20
	$1 \text{ կՎտ} < P_A \leq 5 \text{ կՎտ}$	ԱԳ	1,40
	$5 \text{ կՎտ} < P_A \leq 20 \text{ կՎտ}$	ՍԷՑԳ	2,25
	$20 \text{ կՎտ} < P_A \leq 50 \text{ կՎտ}$	ՍԷՑԳ	2,35
Ցածր	$0,1 \text{ կՎտ} < P_A \leq 0,4 \text{ կՎտ}$	ԱԳ	0,75
	$0,4 \text{ կՎտ} < P_A < 2 \text{ կՎտ}$	ԱԳ	0,8 5
	$2 \text{ կՎտ} < P_A < 8 \text{ կՎտ}$	ՍԷՑԳ	1,50
	$8 \text{ կՎտ} < P_A \leq 20 \text{ կՎտ}$	ՍԷՑԳ	1,60

- բ) 2018 թվականի հուլիսի 1-ից կոնդենսացնող սարքերի արդյունավետության գործակիցը (ԱԳ) եւ սեզոնային էներգետիկ ցուցանիշերի գործակիցը (ՍԷՑԳ) չպետք է ցածր լինեն հետևյալ արժեքներից՝

Աշխատանքային ջերմաստիճան	Դրվածքային հզորություն $P_A$	Կիրառելի գործակից	Արժեք
Միջին	$0,2 \text{ կՎտ} < P_A \leq 1 \text{ կՎտ}$	ԱԳ	1,40
	$1 \text{ կՎտ} < P_A < 5 \text{ կՎտ}$	ԱԳ	1,60
	$5 \text{ կՎտ} < P_A \leq 20 \text{ կՎտ}$	ՍԷՑԳ	2,55
	$20 \text{ կՎտ} < P_A \leq 50 \text{ կՎտ}$	ՍԷՑԳ	2,65
Ցածր	$0,1 \text{ կՎտ} < P_A \leq 0,4 \text{ կՎտ}$	ԱԳ	0,80
	$0,4 \text{ կՎտ} < P_A < 2 \text{ կՎտ}$	ԱԳ	0,95
	$2 \text{ կՎտ} < P_A < 8 \text{ կՎտ}$	ՍԷՑԳ	1,60
	$8 \text{ կՎտ} < P_A \leq 20 \text{ կՎտ}$	ՍԷՑԳ	1,70

- գ) Գլոբալ տաքացման ներուժի 150-ից ցածր ցուցանիշ ունեցող հեղուկ սառնազդակով լիցքավորման համար նախատեսված կոնդենսացնող սարքերի դեպքում ԱԳ եւ ՍԷՏԳ արժեքները 1(ա) կետում նշված արժեքներից կարող են լինել ցածր առավելագույնը 15 %-ով, իսկ 1(բ) կետում նշված արժեքներից՝ առավելագույնը 10 %-ով:
- դ) Թե՛ միջին եւ թե՛ ցածր ջերմաստիճաններում աշխատանքի համար նախատեսված կոնդենսացնող սարքերը պետք է համապատասխանեն յուրաքանչյուր այն կատեգորիայի պահանջներին, որոնց համար իրականացվում է դրանց հայտարարագրումը:

## 2. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

2016 թվականի հուլիսի 1-ից պետք է տրամադրվի կոնդենսացնող սարքերին առնչվող արտադրանքի հետեւյալ տեխնիկական բնութագիրը՝

- ա) դրանց տեղադրողների եւ վերջնական սպառողների համար հրահանգների ձեռնարկներում, ինչպես նաեւ արտադրողների, նրանց լիազորված ներկայացուցիչների եւ ներկրողների՝ ազատ հասանելիություն ունեցող կայքերում պետք է ներառվեն հետեւյալ տարրերը՝
- i) գոլորշիացման նախատեսված ջերմաստիճանը՝ ըստ Յելսիուսի սանդղակի (միջին ջերմաստիճանը՝  $-10^{\circ}\text{C}$ , ցածր ջերմաստիճանը՝  $-35^{\circ}\text{C}$ ).
- ii) 5 կՎտ-ից ցածր հովացման դրվածքային հզորությամբ կոնդենսացնող սարքերի համար՝ միջին ջերմաստիճանը, իսկ 2 կՎտ-ից ցածր հովացման դրվածքային հզորությամբ կոնդենսացնող սարքերի համար՝ ցածր ջերմաստիճանը.

- լրիվ բեռնվածքի դեպքում եւ միջավայրի 32 °C ջերմաստիճանում դրվածքային ԱԳ-ն՝ կլորացված մինչեւ հարյուրերորդականը, ինչպես նաեւ հովացման դրվածքային հզորությունը եւ մուտքային հզորությունը՝ արտահայտված կՎտ-ով եւ կլորացված մինչեւ հարյուրերորդականը.
  - լրիվ բեռնվածքի դեպքում եւ միջավայրի 25 °C ջերմաստիճանում ԱԳ-ի արժեքը՝ կլորացված մինչեւ հարյուրերորդականը, ինչպես նաեւ հովացման համապատասխան հզորությունը եւ մուտքային հզորությունը՝ արտահայտված կՎտ-ով եւ կլորացված մինչեւ հարյուրերորդականը.
- iii) 5 կՎտ-ից բարձր հովացման դրվածքային հզորությամբ կոնդենսացնող սարքերի համար՝ միջին ջերմաստիճանը, իսկ 2 կՎտ-ից բարձր հովացման դրվածքային հզորությամբ կոնդենսացնող սարքերի համար՝ ցածր աշխատանքային ջերմաստիճանը.
- ՍԷՏԳ արժեքը՝ կլորացված մինչեւ հարյուրերորդականը.
  - էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը՝ արտահայտված տարեկան կտրվածքով կՎտժ-ով.
  - հովացման դրվածքային հզորությունը, մուտքային դրվածքային հզորությունը եւ դրվածքային ԱԳ-ն.
  - հովացման նոմինալ հզորությունը եւ մուտքային նոմինալ հզորությունը՝ արտահայտված կՎտ-ով եւ կլորացված մինչեւ հազարերորդականը, եւ ԱԳ-ի արժեքը՝ կլորացված մինչեւ հարյուրերորդականը՝ B, C եւ D գնահատման ինդեքսների դեպքում.

- iv) միջավայրի հաշվարկային 35 °C-ից բարձր ջերմաստիճանում օգտագործման համար նախատեսված կոնդենսացնող սարքերի համար՝ լրիվ բեռնվածքի դեպքում եւ միջավայրի 43 °C ջերմաստիճանում ԱԳ-ի արժեքը՝ կլորացված մինչեւ հարյուրերորդականը, ինչպես նաեւ հովացման համապատասխան հզորությունը եւ մուտքային հզորությունը՝ արտահայտված կՎտ-ով եւ կլորացված մինչեւ հարյուրերորդականը.
  - v) կոնդենսացնող սարքի հետ օգտագործման համար նախատեսված հեղուկ սառնագդակի (սառնագդակների) տեսակը (տեսակները) եւ անվանումը (անվանումները).
  - vi) կոնդենսացնող սարքի սպասարկումն իրականացնելիս ձեռնարկվող հատուկ նախազգուշական ցանկացած միջոց.
  - vii) սառեցնող սարքավորման մեջ ինտեգրելու դեպքում կոնդենսացնող սարքի արդյունավետությունն օպտիմալացնելու համար ձեռնարկվող հատուկ նախազգուշական ցանկացած միջոց.
  - viii) շահագործման ժամկետի ավարտից հետո վերաշրջանառությանը կամ օգտահանմանն առնչվող տեղեկությունները.
- բ) պետք է ապահովվի արտադրողների՝ ազատ հասանելիություն ունեցող կայքերի բաժին՝ տեղադրողների եւ այլ մասնագետների, նրանց լիազորված ներկայացուցիչների կամ ներկրողների համար, որում ներառված կլինի տեղեկություններ՝ հետեւյալի առնչությամբ՝
- i) տեղադրում՝ սարքավորումների էներգաարդյունավետությունն օպտիմալացնելու նպատակով.
  - ii) անվնաս կազմատում՝ պահելու նպատակով.
  - iii) կազմատում եւ ապամոնտաժում՝ շահագործման ժամկետի ավարտից հետո օգտահանելու նպատակով.

- գ) 4-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխանության գնահատման նպատակով տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն հետևյալ տարրերը՝
- i) «ա» կետում նշված տարրերը.
  - ii) եթե կոնկրետ մոդելի վերաբերյալ տեղեկություններն ստացվել են նախագծման հիման վրա կատարված հաշվարկի արդյունքում կամ այլ համակցություններից արտարկման միջոցով՝ այդ հաշվարկների կամ արտարկումների, ինչպես նաև հաշվարկների ճշգրտությունը ստուգելու համար իրականացված փորձաստուգումների մանրամասները, ներառյալ՝ այդ համակցությունների արդյունավետության հաշվարկի մաթեմատիկական մոդելի մանրամասները եւ այդ մոդելն ստուգելու համար ձեռնարկված միջոցառումների մանրամասները:

Ստորեւ բերված 4-րդ եւ 5-րդ աղյուսակներում ներկայացված է պահանջվող տեղեկությունների ինդիկատիվ կառուցվածքը:



Աղյուսակ 4

**Համապատասխանաբար միջին եւ ցածր աշխատանքային ջերմաստիճանների դեպքում՝ 5 կՎտ-ից եւ 2 կՎտ-ից ցածր հովացման դրվածքային հզորությամբ կոնդենսացնող սարքերին ներկայացվող տեղեկատվական պահանջները**

Մոդելը (մոդելները)՝ [այն մոդելը (մոդելները) սահմանող տեղեկությունները, որին առնչվում են այդ տեղեկությունները]				
Հեղուկ սառնազդակը (սառնազդակները)՝ [կոնդենսացնող սարքի հետ օգտագործման համար նախատեսված հեղուկ սառնազդակը (սառնազդակները) սահմանող տեղեկությունները]				
Կետ	Պայմանանշան	Արժեք		Միավոր
<b>Գոլորշիացման ջերմաստիճան՝ *</b>	<i>t</i>	- 10 °C	- 35 °C	°C
<b>Պարամետրերը՝ լրիվ բեռնվածքի եւ միջավայրի 32 °C ջերմաստիճանի դեպքում</b>				
Հովացման դրվածքային հզորություն	<i>P<sub>A</sub></i>	x,xxx	x,xxx	կՎտ
Մուտքային դրվածքային հզորություն	<i>D<sub>A</sub></i>	x,xxx	x,xxx	կՎտ
<b>Դրվածքային ԱԳ</b>	<i>ԱԳ<sub>A</sub></i>	x,xx	x,xx	
<b>Պարամետրերը՝ լրիվ բեռնվածքի եւ միջավայրի 25 °C ջերմաստիճանի դեպքում</b>				
Հովացման հզորություն	<i>P<sub>2</sub></i>	x,xxx	x,xxx	կՎտ
Մուտքային հզորություն	<i>D<sub>2</sub></i>	x,xxx	x,xxx	կՎտ
<b>ԱԳ</b>	<i>ԱԳ<sub>2</sub></i>	x,xx	x,xx	
<b>Պարամետրերը՝ լրիվ բեռնվածքի եւ միջավայրի 43 °C ջերմաստիճանի դեպքում (եթե կիրառելի է)</b>				
Հովացման հզորություն	<i>P<sub>3</sub></i>	x,xxx	x,xxx	կՎտ
Մուտքային հզորություն	<i>D<sub>3</sub></i>	x,xxx	x,xxx	կՎտ
<b>ԱԳ</b>	<i>ԱԳ<sub>3</sub></i>	x,xx	x,xx	
<b>Այլ կետեր</b>				
Հզորության հսկողությունը		Ֆիքսված/աստիճանական/փոփոխական		
Կոնտակտային տվյալները	Արտադրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի անունը եւ հասցեն:			
* Գոլորշիացման միայն մեկ ջերմաստիճանում աշխատելու համար նախատեսված կոնդենսացնող սարքերի դեպքում «Արժեք» ցուցանիշին առնչվող երկու սյունակներից մեկը կարելի է ջնջել:				

Աղյուսակ 5

**Համապատասխանաբար միջին եւ ցածր աշխատանքային ջերմաստիճանների դեպքում՝ 5 կՎտ-ից եւ 2 կՎտ-ից բարձր հովացման դրվածքային հզորությամբ կոնդենսացնող սարքերին ներկայացվող տեղեկատվական պահանջները**

Մոդելը (մոդելները)՝ [այն մոդելը (մոդելները) սահմանող տեղեկությունները, որին առնչվում են այդ տեղեկությունները]				
Հեղուկ սառնազդակը (սառնազդակները)՝ [կոնդենսացնող սարքի հետ օգտագործման համար նախատեսված հեղուկ սառնազդակը (սառնազդակները) սահմանող տեղեկությունները]				
Կետ	Պայմանանշան	Արժեք		Միավոր
<b>Գոլորշիացման ջերմաստիճան * </b>	<i>t</i>	- 10 °C	- 35 °C	°C
<b>Էլեկտրաէներգիայի տարեկան սպառում</b>	<i>Q</i>	x	x	կՎտժ/տ
<b>Սեզոնային էներգետիկ ցուցանիշերի գործակից</b>	<i>ԱԷՅԳ</i>	x,xx	x,xx	
<b>Պարամետրերը՝ լրիվ բեռնվածքի եւ միջավայրի 32 °C ջերմաստիճանի դեպքում (կետ (A))</b>				
Հովացման դրվածքային հզորություն	<i>P<sub>A</sub></i>	x,xx	x,xx	կՎտ
Մուտքային դրվածքային հզորություն	<i>D<sub>A</sub></i>	x,xx	x,xx	կՎտ
<b>Դրվածքային ԱԳ</b>	<i>ԱԳ<sub>A</sub></i>	x,xx	x,xx	
<b>Պարամետրերը՝ մասնակի բեռնվածքի եւ միջավայրի 25 °C ջերմաստիճանի դեպքում (կետ (B))</b>				
Հովացման նոմինալ հզորություն	<i>P<sub>B</sub></i>	x,xx	x,xx	կՎտ
Մուտքային նոմինալ հզորություն	<i>D<sub>B</sub></i>	x,xx	x,xx	կՎտ
<b>Նոմինալ ԱԳ</b>	<i>ԱԳ<sub>B</sub></i>	x,xx	x,xx	
<b>Պարամետրերը՝ մասնակի բեռնվածքի եւ միջավայրի 15 °C ջերմաստիճանի դեպքում (կետ (C))</b>				
Հովացման նոմինալ հզորություն	<i>P<sub>C</sub></i>	x,xx	x,xx	կՎտ
Մուտքային նոմինալ հզորություն	<i>D<sub>C</sub></i>	x,xx	x,xx	կՎտ
<b>Նոմինալ ԱԳ</b>	<i>ԱԳ<sub>C</sub></i>	x,xx	x,xx	
<b>Պարամետրերը՝ մասնակի բեռնվածքի եւ միջավայրի 5 °C ջերմաստիճանի դեպքում (կետ (D))</b>				
Հովացման նոմինալ հզորություն	<i>P<sub>D</sub></i>	x,xx	x,xx	կՎտ
Մուտքային նոմինալ հզորություն	<i>D<sub>D</sub></i>	x,xx	x,xx	կՎտ
<b>Նոմինալ ԱԳ</b>	<i>ԱԳ<sub>D</sub></i>	x,xx	x,xx	

**Պարամետրերը՝ լրիվ բեռնվածքի եւ միջավայրի 43 °C  
ջերմաստիճանի դեպքում (եթե կիրառելի է)**

Հովացման հզորություն	$P_3$	x,xx	x,xx	կՎտ
Մուտքային հզորություն	$D_3$	x,xx	x,xx	կՎտ
<b>Նոմինալ ԱԳ</b>	$U_{G_3}$	x,xx	x,xx	

**Այլ կետեր**

Հզորության հսկողություն	Ֆիքսված/փոփոխյին/փոփոխական		
Նվազման գործակիցը՝ ֆիքսված եւ փոփոխյին հզորություն ունեցող սարքերի համար	$C_{in}$	0,25	
Կոնտակտային տվյալները	Արտադրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի անունը եւ հասցեն:		

\*Գոլորշիացման միայն մեկ ջերմաստիճանում աշխատելու համար նախատեսված կոնդենսացնող սարքերի համար «Արժեք» ցուցանիշին առնչվող երկու սյունակներից մեկը կարելի է ջնջել:

*ՀԱՎԵԼՎԱԾ 52***Կոնդենսացնող սարքերի չափումներն ու հաշվարկները**

1. Սույն կանոնակարգի պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու եւ ստուգելու նպատակներով պետք է իրականացվեն չափումներ եւ հաշվարկներ՝ ներդաշնակեցված այնպիսի ստանդարտների կիրառմամբ, որոնց հղումային համարներն այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում*, կամ հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի այլ մեթոդների կիրառմամբ, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդների վրա: Դրանք պետք է համապատասխանեն 2-րդ կետում սահմանված պայմաններին եւ տեխնիկական պարամետրերին:
2. Հովացման հզորության, մուտքային հզորության, արդյունավետության գործակցի եւ սեզոնային էներգետիկ ցուցանիշերի գործակցի արժեքները սահմանելու համար պետք է կատարվեն չափումներ հետևյալ պայմաններում՝
  - ա) դրսի ջերմափոխանակչի մեջ (կոնդենսատորում) միջավայրի հաշվարկային ջերմաստիճանը պետք է լինի 32 °C.
  - բ) դրսի ջերմափոխանակչի մեջ (գոլորշիչում) հագեցած գոլորշիացման ջերմաստիճանը ցածր ջերմաստիճանի դեպքում պետք է լինի –35 °C, իսկ միջին ջերմաստիճանի դեպքում՝ –10 °C.
  - գ) եթե կիրառելի է՝ տարվա ընթացքում Միությունում միջին կլիմայական պայմաններին բնորոշ միջավայրի ջերմաստիճանի տատանումները եւ այն ժամերի համապատասխան քանակը, որոնց ընթացքում առկա են այդ ջերմաստիճանները, պետք է լինեն այնպիսին, ինչպես սահմանված է 6-րդ աղյուսակում.

դ) եթե կիրառելի է՝ պետք է հաշվի առնվի ցիկլային աշխատանքի հետեանքով առաջացած էներգաարդյունավետության նվազման ազդեցությունը՝ կախված կոնդենսացնող սարքի հզորության հսկողության տեսակից:

### Աղյուսակ 6

**Կոնդենսացնող սարքերի համար Եվրոպայում միջին կլիմայական պայմաններում տարվա ընթացքում դրսի ջերմաստիճանի տատանումները**

j	T <sub>j</sub>	h <sub>j</sub>	j	T <sub>j</sub>	h <sub>j</sub>	j	T <sub>j</sub>	h <sub>j</sub>
1	- 19	0,08	15	- 5	56,61	29	9	371,63
2	- 18	0,41	16	- 4	76,36	30	10	377,32
3	- 17	0,65	17	- 3	106,07	31	11	376,53
4	- 16	1,05	18	- 2	153,22	32	12	386,42
5	- 15	1,74	19	- 1	203,41	33	13	389,84
6	- 14	2,98	20	0	247,98	34	14	384,45
7	- 13	3,79	21	1	282,01	35	15	370,45
8	- 12	5,69	22	2	275,91	36	16	344,96
9	- 11	8,94	23	3	300,61	37	17	328,02
10	- 10	11,81	24	4	310,77	38	18	305,36
11	- 9	17,29	25	5	336,48	39	19	261,87
12	- 8	20,02	26	6	350,48	40	20	223,90
13	- 7	28,73	27	7	363,49	41	21	196,31
14	- 6	39,71	28	8	368,91	42	22	163,04
43	23	141,78	49	29	43,35	55	35	2,09
44	24	121,93	50	30	31,02	56	36	1,21
45	25	104,46	51	31	20,21	57	37	0,52
46	26	85,77	52	32	11,85	58	38	0,40
47	27	71,54	53	33	8,17			
48	28	56,57	54	34	3,83			

## ՀԱՎԵԼՎԱԾ VII

**Տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումներին ներկայացվող  
էկոնախագծման պահանջները**

## 1. ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ա) 2016 թվականի հուլիսի 1-ից տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների սեզոնային էներգետիկ ցուցանիշերի գործակիցը (ՍԷՑԳ) չպետք է ցածր լինի հետևյալ արժեքներից՝

Ջերմության փոխանցման միջավայրը՝ կոնդենսացնող հատվածում	Աշխատանքային ջերմաստիճան	Հովացման դրվածքային հզորություն $P_A$	Նվազագույն ՍԷՑԳ արժեք
Օդ	Միջին	$P_A \leq 300$ կՎտ	2,24
		$P_A > 300$ կՎտ	2,80
	Ցածր	$P_A \leq 200$ կՎտ	1,48
		$P_A > 200$ կՎտ	1,60
Ջուր	Միջին	$P_A \leq 300$ կՎտ	2,86
		$P_A > 300$ կՎտ	3,80
	Ցածր	$P_A < 200$ կՎտ	1,82
		$P_A > 200$ կՎտ	2,10

բ) 2018 թվականի հուլիսի 1-ից տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների սեզոնային էներգետիկ ցուցանիշերի գործակիցը (ՍԷՑԳ) չպետք է ցածր լինի հետևյալ արժեքներից՝

Ջերմության փոխանցման միջավայրը՝ կոնդենսացնող հատվածում	Աշխատանքային ջերմաստիճան	Հովացման դրվածքային հզորություն $P_A$	Նվազագույն ՍԷՑԳ արժեք
Օդ	Միջին	$P_A \leq 300$ կՎտ	2,58
		$P_A > 300$ կՎտ	3,22

Ջուր	Ցածր	$P_A \leq 200$ կՎտ	1,70
		$P_A > 200$ կՎտ	1,84
	Միջին	$P_A \leq 300$ կՎտ	3,29
		$P_A > 300$ կՎտ	4,37
Ցածր	$P_A \leq 200$ կՎտ	2,09	
	$P_A > 200$ կՎտ	2,42	

գ) Գլոբալ տաքացման ներուժի 150-ից ցածր ցուցանիշ ունեցող հեղուկ սառնազդակով լիցքավորման համար նախատեսված տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների դեպքում ՍԷՏԳ արժեքները 1(ա) եւ (բ) կետերում նշված արժեքներից կարող են ցածր լինել առավելագույնը 10 %-ով:

## 2. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

2016 թվականի հուլիսի 1-ից պետք է տրամադրվի տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումներին առնչվող արտադրանքի հետեւյալ տեխնիկական բնութագիրը՝

ա) դրանց տեղադրողների եւ վերջնական սպառողների համար հրահանգների ձեռնարկներում, ինչպես նաեւ արտադրողների, նրանց լիազորված ներկայացուցիչների եւ ներկրողների՝ ազատ հասանելիություն ունեցող կայքերում պետք է ներառվեն հետեւյալ տարրերը՝

i) աշխատանքային նախատեսված ջերմաստիճանը՝ ըստ Յելսիուսի սանդղակի (միջին ջերմաստիճանը՝ – 8 °C, ցածր ջերմաստիճանը՝ –25 °C).

ii) տեխնոլոգիական պաղեցնող սարքավորման տեսակը՝ օդով պաղեցման կամ ջրով պաղեցման միջոցով աշխատող.

- iii) հովացման դրվածքային հզորությունը, մուտքային դրվածքային հզորությունը՝ արտահայտված կՎտ-ով եւ կլորացված մինչեւ հարյուրերորդականը.
  - iv) էներգաարդյունավետության դրվածքային գործակիցը (ԷԱԳ<sub>A</sub>)՝ կլորացված մինչեւ հարյուրերորդականը.
  - v) հովացման նոմինալ հզորությունը եւ մուտքային նոմինալ հզորությունը՝ B, C եւ D գնահատման ինդեքսների դեպքում՝ արտահայտված կՎտ-ով եւ կլորացված մինչեւ հարյուրերորդականը.
  - vi) նոմինալ ԷԱԳ-ն՝ B, C եւ D գնահատման ինդեքսների դեպքում՝ կլորացված մինչեւ հարյուրերորդականը.
  - vii) ՍԷՑԳ արժեքը՝ կլորացված մինչեւ հարյուրերորդականը.
  - viii) էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը՝ արտահայտված տարեկան կտրվածքով կՎտժ-ով.
  - ix) տեխնոլոգիական պաղեցնող սարքավորման հետ օգտագործման համար նախատեսված հեղուկ սառնազդակի (սառնազդակների) տեսակը (տեսակները) եւ անվանումը (անվանումները).
  - x) տեխնոլոգիական պաղեցնող սարքավորման սպասարկումն իրականացնելիս ձեռնարկվող հատուկ նախազգուշական ցանկացած միջոց.
  - xi) շահագործման ժամկետի ավարտից հետո վերաշրջանառությանը կամ օգտահանմանն առնչվող տեղեկությունները.
- բ) պետք է ապահովվի արտադրողների՝ ազատ հասանելիություն ունեցող կայքերի բաժին՝ տեղադրողների եւ այլ մասնագետների, նրանց լիազորված ներկայացուցիչների կամ ներկրողների համար, որում ներառված կլինեն տեղեկություններ՝ հետեւյալի առնչությամբ՝



- i) տեղադրում՝ սարքավորումների էներգաարդյունավետությունն օպտիմալացնելու նպատակով.
  - ii) անվնաս կազմատում՝ պահելու նպատակով.
  - iii) կազմատում եւ ապամոնտաժում՝ շահագործման ժամկետի ավարտից հետո օգտահանելու նպատակով.
- գ) 4-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխանության գնահատման նպատակով տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն հետևյալ տարրերը՝
- i) «ա» կետում նշված տարրերը.
  - ii) եթե կոնկրետ մոդելի վերաբերյալ տեղեկություններն ստացվել են նախագծման հիման վրա կատարված հաշվարկի արդյունքում կամ այլ համակցություններից արտարկման միջոցով՝ այդ հաշվարկների կամ արտարկումների, ինչպես նաև հաշվարկների ճշգրտությունը ստուգելու համար իրականացված փորձաստուգումների մանրամասները, ներառյալ՝ այդ համակցությունների արդյունավետության հաշվարկի մաթեմատիկական մոդելի մանրամասները եւ այդ մոդելն ստուգելու համար ձեռնարկված միջոցառումների մանրամասները:

## Աղյուսակ 7

**Տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումներին ներկայացվող  
տեղեկատվական պահանջները**

Մոդելը (մոդելները)՝ [այն մոդելը (մոդելները) սահմանող տեղեկությունները, որին առնչվում են այդ տեղեկությունները]				
Կոնդենսացման տեսակը՝ [օդով պաղեցում/ջրով պաղեցում]				
Հեղուկ սառնազդակը (սառնազդակները)՝ [տեխնոլոգիական պաղեցնող սարքավորման հետ օգտագործման համար նախատեսված հեղուկ սառնազդակը (սառնազդակները) սահմանող տեղեկությունները]				
Կետ	Պայմանանշան	Արժեք		Միավոր
<b>Աշխատանքային ջերմաստիճան</b>	$t$	- 8 °C	- 25 °C	°C
<b>Սեզոնային էներգետիկ ցուցանիշների գործակից</b>	$UESP$	x,xx	x,xx	
<b>Էլեկտրաէներգիայի տարեկան սպառում</b>	$Q$	x	x	կՎտժ/տ
<b>Պարամետրերը՝ լրիվ բեռնվածքի եւ միջավայրի հաշվարկային ջերմաստիճանի դեպքում (կետ (A))</b>				
Հովացման դրվածքային հզորություն	$P_A$	x,xx	x,xx	կՎտ
Մուտքային դրվածքային հզորություն	$D_A$	x,xx	x,xx	կՎտ
<b>Դրվածքային ԷԱԳ</b>	$EUA_A$	x,xx	x,xx	
<b>Պարամետրերը՝ B գնահատման ինդեքսի դեպքում</b>				
Հովացման նոմինալ հզորություն	$P_B$	x,xx	x,xx	կՎտ
Մուտքային նոմինալ հզորություն	$D_B$	x,xx	x,xx	կՎտ
<b>Նոմինալ ԷԱԳ</b>	$EUA_B$	x,xx	x,xx	
<b>Պարամետրերը՝ C գնահատման ինդեքսի դեպքում</b>				
Հովացման նոմինալ հզորություն	$P_C$	x,xx	x,xx	կՎտ
Մուտքային նոմինալ հզորություն	$D_C$	x,xx	x,xx	կՎտ
<b>Նոմինալ ԷԱԳ</b>	$EUA_C$	x,xx	x,xx	
<b>Պարամետրերը՝ D գնահատման ինդեքսի դեպքում</b>				
Հովացման նոմինալ հզորություն	$P_D$	x,xx	x,xx	կՎտ

Մուտքային նոմինալ հզորություն	$D_D$	x,xx	x,xx	կՎտ
<b>Նոմինալ ԷԱԳ</b>	$EUA_D$	x,xx	x,xx	
<b>Այլ կետեր</b>				
Հզորության հսկողությունը		Ֆիքսված/փուլային**/փոփոխական		
Նվազման գործակիցը՝ ֆիքսված եւ փուլային հզորություն ունեցող սարքերի համար*	$C_c$	x,xx	x,xx	
Կոնտակտային տվյալները	Արտադրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի անունը եւ հասցեն:			
<p>*Եթե <math>C_c</math>-ն չափման միջոցով սահմանված չէ, ապա նվազման դեֆոլտային գործակիցը կազմում է <math>C_c = 0,9</math>: Եթե <math>C_c</math>-ի դեֆոլտային արժեքն <i>ընտրված</i> է, ապա ցիկլային փորձաստուգման արդյունքներ չեն պահանջվում: Այլ դեպքում հովացման ցիկլային փորձաստուգման արժեքը պահանջվում է:</p> <p>**Փուլային հզորությամբ սարքերի համար թեք գծով («/») բաժանված երկու արժեքները պետք է սահմանվեն յուրաքանչյուր վանդակում՝ «հովացման հզորություն» եւ «ԷԱԳ» ցուցանիշներին առնչվող բաժնում: Աշխատանքային միայն մեկ ջերմաստիճանում աշխատելու համար նախատեսված տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների դեպքում «Արժեք» ցուցանիշին առնչվող երկու սյունակներից մեկը կարելի է ջնջել:</p>				

*ՀԱՎԵԼՎԱԾ VIII***Տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների  
չափումներն ու հաշվարկները**

1. Սույն կանոնակարգի պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու եւ ստուգելու նպատակներով պետք է իրականացվեն չափումներ եւ հաշվարկներ՝ ներդաշնակեցված այնպիսի ստանդարտների կիրառմամբ, որոնց հղումային համարներն այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում*, կամ հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի այլ մեթոդների կիրառմամբ, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից մեթոդների վրա: Դրանք պետք է համապատասխանեն 2-րդ եւ 3-րդ կետերում սահմանված պայմաններին եւ տեխնիկական պարամետրերին:
2. Հովացման հզորության, մուտքային հզորության, էներգաարդյունավետության գործակցի եւ սեզոնային էներգետիկ ցուցանիշերի գործակցի արժեքները սահմանելու համար պետք է կատարվեն չափումներ հետեւյալ պայմաններում՝
  - ա) օդով պաղեցման միջոցով աշխատող պաղեցման սարքավորումների համար դրսի ջերմափոխանակչի մեջ միջավայրի հաշվարկային ջերմաստիճանը պետք է լինի 35 °C, իսկ ջրով պաղեցման միջոցով աշխատող պաղեցման սարքավորումների համար կոնդենսատորի մեջ ջրի մուտքային ջերմաստիճանը՝ 30 °C.
  - բ) ներսի ջերմափոխանակչի մեջ հեղուկի ելքային ջերմաստիճանը ցածր ջերմաստիճանի դեպքում պետք է լինի -25 °C, իսկ միջին ջերմաստիճանի դեպքում՝ -8 °C.
  - գ) տարվա ընթացքում Միությունում միջին կլիմայական պայմաններին բնորոշ միջավայրի ջերմաստիճանի տատանումները եւ այն ժամերի

համապատասխան քանակը, որոնց ընթացքում առկա են այդ ջերմաստիճանները, պետք է լինեն այնպիսին, ինչպես սահմանված է VI հավելվածի 6-րդ աղյուսակում.

- դ) պետք է հաշվի առնվի ցիկլային աշխատանքի հետեւանքով առաջացած էներգաարդյունավետության նվազման ազդեցությունը՝ կախված տեխնոլոգիական պաղեցնող սարքավորման հզորության հսկողության տեսակից:

---

*ՀԱՎԵԼՎԱԾ IX***Շուկայի վերահսկողության նպատակով ստուգման ընթացակարգը՝  
մասնագիտացված սառնարանային պահարանների մասով**

2009/125/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված՝ շուկայի վերահսկողության նպատակով ստուգումներ իրականացնելիս անդամ պետությունների մարմինները կիրառում են II հավելվածում սահմանված պահանջներին առնչվող ստուգման հետեւյալ ընթացակարգը՝

1. Անդամ պետությունների մարմիններն անցկացնում են յուրաքանչյուր մոդելի համար մեկ միավոր արտադրատեսակի փորձարկում:
2. Մոդելը համարվում է II հավելվածում սահմանված կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե՝
  - ա) նոմինալ արժեքները համապատասխանում են II հավելվածում սահմանված պահանջներին.
  - բ) չափված ծավալը դրվածքային արժեքից ցածր չէ ավելի, քան 3 %-ով.
  - գ) էներգասպառման չափված արժեքը դրվածքային արժեքից (է24ժ) բարձր չէ ավելի, քան 10 %-ով:
3. Եթե 2-րդ կետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա անդամ պետությունների մարմինները փորձարկման համար պատահականության սկզբունքով ընտրում են նույն մոդելի երեք լրացուցիչ արտադրատեսակ: Որպես այլընտրանք՝ ընտրված երեք լրացուցիչ արտադրատեսակները կարող են ընտրվել մեկ կամ մի քանի տարբեր մոդելներից, որոնք տեխնիկական փաստաթղթերում նշվել են որպես համարժեք արտադրանք:
4. Մոդելը համարվում է II հավելվածում սահմանված կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե՝

- ա) երեք արտադրատեսակների միջին ցուցանիշի մասով չափված ծավալը դրվածքային արժեքից ցածր չէ ավելի, քան 3 %-ով.
- բ) երեք արտադրատեսակների միջին ցուցանիշի մասով էներգասպառման չափված արժեքը դրվածքային արժեքից (է24ժ) բարձր չէ ավելի, քան 10 %-ով:
5. Եթե 4-րդ կետում նշված արդյունքները չեն ապահովվում, ապա մասնագիտացված սառնարանային պահարանների տվյալ մոդելը եւ բոլոր այլ համարժեք մոդելները չեն համապատասխանում սույն կանոնակարգի պահանջներին: Անդամ պետությունների մարմիններն այլ անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին փորձարկման արդյունքներն ու այլ համապատասխան տեղեկություն տրամադրում են մոդելի անհամապատասխանության վերաբերյալ որոշումը կայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Անդամ պետությունների մարմինները կիրառում են III եւ IV հավելվածներով սահմանված չափման եւ հաշվարկման մեթոդները:

Սույն հավելվածում սահմանված՝ ստուգման մասով թույլատրելի շեղումներն առնչվում են միայն անդամ պետությունների մարմինների կողմից իրականացված՝ չափված պարամետրերի ստուգմանը եւ մատակարարի կողմից չպետք է կիրառվեն որպես թույլատրելի շեղում՝ տեխնիկական փաստաթղթերում արժեքներ սահմանելու նպատակով: Պիտակի վրա կամ արտադրանքի տեղեկաթերթիկում զետեղված արժեքները եւ դասերը մատակարարի համար չպետք է լինեն ավելի բարենպաստ, քան տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքները:

---

*ՀԱՎԵԼՎԱԾ X***Շուկայի վերահսկողության նպատակով ստուգման ընթացակարգը՝  
կոնդենսացնող սարքերի մասով**

2009/125/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված՝ շուկայի վերահսկողության նպատակով ստուգումներ իրականացնելիս անդամ պետությունների մարմինները կիրառում են V հավելվածում սահմանված պահանջներին առնչվող ստուգման հետեւյալ ընթացակարգը՝

1. Անդամ պետությունների մարմիններն անցկացնում են յուրաքանչյուր մոդելի համար մեկ միավոր արտադրատեսակի փորձարկում:
2. Կոնդենսացնող սարքի մոդելը համարվում է V հավելվածում սահմանված կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե՝
  - ա) նոմինալ արժեքները համապատասխանում են V հավելվածում սահմանված պահանջներին.
  - բ) ցածր ջերմաստիճանի դեպքում 2 կՎտ-ից բարձր, իսկ միջին ջերմաստիճանի դեպքում 5 կՎտ-ից բարձր հովացման դրվածքային հզորություն ունեցող կոնդենսացնող սարքերի համար սեզոնային էներգետիկ ցուցանիշերի գործակիցը (ՍԷՑԳ) նոմինալ արժեքից ցածր է առավելագույնը 10 %-ով՝ հովացման դրվածքային հզորության դեպքում չափված A կետով.
  - գ) ցածր ջերմաստիճանի դեպքում 2 կՎտ-ից ցածր, իսկ միջին ջերմաստիճանի դեպքում 5 կՎտ-ից ցածր հովացման դրվածքային հզորություն ունեցող կոնդենսացնող սարքերի համար արդյունավետության դրվածքային գործակիցը (ԱԳ) նոմինալ արժեքից ցածր է առավելագույնը 10 %-ով, որը չափվել է հովացման դրվածքային հզորության դեպքում.



- դ) ցածր ջերմաստիճանի դեպքում 2 կՎտ-ից ցածր, իսկ միջին ջերմաստիճանի դեպքում 5 կՎտ-ից ցածր հովացման դրվածքային հզորություն ունեցող կոնդենսացնող սարքերի համար ԱԳ<sub>Ե</sub>, ԱԳ<sub>Ը</sub>, ԱԳ<sub>Ծ</sub> արդյունավետության գործակիցները նոմինալ արժեքից ցածր են առավելագույնը 10 %-ով, որը չափվել է հովացման նոմինալ հզորության դեպքում.
3. Եթե 2-րդ կետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա անդամ պետությունների մարմինները փորձարկման համար պատահականության սկզբունքով ընտրում են նույն մոդելի երեք լրացուցիչ արտադրատեսակ:
4. Կոնդենսացնող սարքի մոդելը համարվում է V հավելվածում սահմանված կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե՝
- ա) ցածր ջերմաստիճանի դեպքում 2 կՎտ-ից բարձր, իսկ միջին ջերմաստիճանի դեպքում 5 կՎտ-ից բարձր հովացման դրվածքային հզորություն ունեցող կոնդենսացնող սարքերի համար երեք արտադրատեսակների միջին ցուցանիշի մասով սեզոնային էներգետիկ ցուցանիշերի գործակիցը (ՍԷՑԳ) նոմինալ արժեքից ցածր է առավելագույնը 10 %-ով՝ հովացման դրվածքային հզորության դեպքում չափված A կետով.
- բ) ցածր ջերմաստիճանի դեպքում 2 կՎտ-ից ցածր, իսկ միջին ջերմաստիճանի դեպքում 5 կՎտ-ից ցածր հովացման դրվածքային հզորություն ունեցող կոնդենսացնող սարքերի համար երեք արտադրատեսակների միջին ցուցանիշի մասով արդյունավետության դրվածքային գործակիցը (ԱԳԱ) նոմինալ արժեքից ցածր է առավելագույնը 10 %-ով, որը չափվել է հովացման դրվածքային հզորության դեպքում.
- գ) ցածր ջերմաստիճանի դեպքում 2 կՎտ-ից ցածր, իսկ միջին ջերմաստիճանի դեպքում 5 կՎտ-ից ցածր հովացման դրվածքային

հզորություն ունեցող կոնդենսացնող սարքերի համար երեք արտադրատեսակների միջին ցուցանիշի մասով ԱԳ<sub>B</sub>, ԱԳ<sub>C</sub>, ԱԳ<sub>D</sub> արդյունավետության գործակիցները նոմինալ արժեքից ցածր են առավելագույնը 10 %-ով, որը չափվել է հովացման նոմինալ հզորության դեպքում:

5. Եթե 4-րդ կետում նշված արդյունքները չեն ապահովվում, ապա մոդելը համարվում է սույն կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող:

Անդամ պետությունների մարմինները կիրառում են VI հավելվածում սահմանված չափման եւ հաշվարկման մեթոդները:

Սույն հավելվածում սահմանված՝ ստուգման մասով թույլատրելի շեղումներն առնչվում են միայն անդամ պետությունների մարմինների կողմից իրականացված՝ չափված պարամետրերի ստուգմանը եւ մատակարարի կողմից չպետք է կիրառվեն որպես թույլատրելի շեղում՝ տեխնիկական փաստաթղթերում արժեքներ սահմանելու նպատակով:

---

*ՀԱՎԵԼՎԱԾ XI***Շուկայի վերահսկողության նպատակով ստուգման ընթացակարգը՝  
տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների մասով**

2009/125/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված՝ շուկայի վերահսկողության նպատակով ստուգումներ իրականացնելիս անդամ պետությունների մարմինները կիրառում են VII հավելվածում սահմանված պահանջներին առնչվող ստուգման հետեւյալ ընթացակարգը՝

1. Անդամ պետությունների մարմիններն անցկացնում են յուրաքանչյուր մոդելի համար մեկ միավոր արտադրատեսակի փորձարկում:
2. Տեխնոլոգիական պաղեցնող սարքավորման մոդելը համարվում է VII հավելվածում սահմանված կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե՝
  - ա) նոմինալ արժեքները համապատասխանում են VII հավելվածում սահմանված պահանջներին.
  - բ) սեզոնային էներգետիկ ցուցանիշերի գործակիցը (ՍԷՅԳ) նոմինալ արժեքից ցածր է առավելագույնը 10 %-ով՝ հովացման դրվածքային հզորության դեպքում չափված A կետով.
  - գ) էներգաարդյունավետության դրվածքային գործակիցը (ԷԱԳԱ) նոմինալ արժեքից ցածր է առավելագույնը 10 %-ով, որը չափվել է հովացման դրվածքային հզորության դեպքում:
3. Եթե 2-րդ կետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա անդամ պետությունների մարմինները փորձարկման համար պատահականության սկզբունքով ընտրում են նույն մոդելի երեք լրացուցիչ արտադրատեսակ:
4. Տեխնոլոգիական պաղեցնող սարքավորման մոդելը համարվում է VII հավելվածում սահմանված կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե՝

- ա) երեք արտադրատեսակների միջին ցուցանիշի մասով սեզոնային էներգետիկ ցուցանիշերի գործակիցը (ՍԷՏԳ) նոմինալ արժեքից ցածր է առավելագույնը 10 %-ով՝ հովացման դրվածքային հզորության դեպքում չափված A կետով.
- բ) երեք արտադրատեսակների միջին ցուցանիշի մասով էներգաարդյունավետության դրվածքային գործակիցը (ԷԱԳԱ) նոմինալ արժեքից ցածր է առավելագույնը 10 %-ով, որը չափվել է հովացման դրվածքային հզորության դեպքում:

5. Եթե 4-րդ կետում նշված արդյունքները չեն ապահովվում, ապա մոդելը համարվում է սույն կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող:

Անդամ պետությունների մարմինները կիրառում են VIII հավելվածում սահմանված չափման եւ հաշվարկման մեթոդները:

Սույն հավելվածում սահմանված՝ ստուգման մասով թույլատրելի շեղումներն առնչվում են միայն անդամ պետությունների մարմինների կողմից իրականացված՝ չափված պարամետրերի ստուգմանը եւ մատակարարի կողմից չպետք է կիրառվեն որպես թույլատրելի շեղում՝ տեխնիկական փաստաթղթերում արժեքներ սահմանելու նպատակով:

---

ՀԱՎԵԼՎԱԾ XII

**6-րդ հոդվածում նշված կողմնորոշիչ հենանիշերը**

1. Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ մասնագիտացված սառնարանային պահարանների՝ շուկայում գոյություն ունեցող լավագույն տեխնոլոգիան դրանց էներգաարդյունավետության ինդեքսի (ԷԱԻ) առումով սահմանվել է հետևյալը՝

	Զուտ ծավալ (լիտրեր)	Տարեկան էներգասպառում	ԷԱԻ
Ուղղահայաց տիպի՝ պաղեցնող	600	474,5	29,7
Կանգնակ տիպի՝ պաղեցնող	300	547,5	21,4
Ուղղահայաց տիպի՝ սառեցնող	600	1 825	41,2
Կանգնակ տիպի՝ սառեցնող	200	1 460	41,0

2. Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ կոնդենսացնող սարքերի՝ շուկայում գոյություն ունեցող լավագույն տեխնոլոգիան արդյունավետության դրվածքային գործակցի եւ սեզոնային էներգետիկ ցուցանիշների գործակցի առումով սահմանվել է հետևյալը՝

Աշխատանքային ջերմաստիճան	Դրվածքային հզորություն $P_A$	Կիրառելի գործակից	Հենանշային արժեք
Միջին	$0,2 \text{ կՎտ} < P_A \leq 1 \text{ կՎտ}$	ԱԳ	1,9
	$1 \text{ կՎտ} < P_A \leq 5 \text{ կՎտ}$	ԱԳ	2,3
	$5 \text{ կՎտ} < P_A \leq 20 \text{ կՎտ}$	ՍԷՑԳ	3,6
	$20 \text{ կՎտ} < P_A \leq 50 \text{ կՎտ}$	ՍԷՑԳ	3,5
Ցածր	$0,1 \text{ կՎտ} \leq P_A \leq 0,4 \text{ կՎտ}$	ԱԳ	1,0
	$0,4 \text{ կՎտ} < P_A < 2 \text{ կՎտ}$	ԱԳ	1,3
	$2 \text{ կՎտ} < P_A < 8 \text{ կՎտ}$	ՍԷՑԳ	2,0
	$8 \text{ կՎտ} < P_A \leq 20 \text{ կՎտ}$	ՍԷՑԳ	2,0

3. Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ տեխնոլոգիական պաղեցնող սարքավորումների՝ շուկայում գոյություն ունեցող լավագույն տեխնոլոգիան սեզոնային էներգետիկ ցուցանիշերի գործակցի առումով սահմանվել է հետևյալը՝

Ջերմության փոխանցման միջավայրը՝ կոնդենսացնող հատվածում	Աշխատանքային ջերմաստիճան	Հովացման դրվածքային հզորություն $P_A$	Նվազագույն ՍԷՑԳ արժեք
Օդ	Միջին	$P_A \leq 300$ կՎտ	3,4
		$P_A > 300$ կՎտ	3,7
	Ցածր	$P_A < 200$ կՎտ	1,9
		$P_A > 200$ կՎտ	1,95
Ջուր	Միջին	$P_A \leq 300$ կՎտ	4,3
		$P_A > 300$ կՎտ	4,5
	Ցածր	$P_A < 200$ կՎտ	2,3
		$P_A > 200$ կՎտ	2,7